Հայաստանի Հանրապետության Ազգային զեկույց
Պեկին + 20 Գործողությունների ծրագրի իրականացման վերաբերյալ

Զեկույցը նախապատրաստելիս ՀՀ կառավարությունն առաջնորդվել է ՄԱԿ – ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի (UNECE) և ՄԱԿ Կանայք (UN Women) կողմից նախապատրաստած ուղեցույցով: Զեկույցի նախապատրաստմանը մասնակցել են բոլոր շահագրգիռ նախարարություններն ու գերատեսչությունները, այդ թվում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, արտաքին գործերի, արդարադատության, գյուղատնտեսության, էկոնոմիկայի, ֆինանսների, կրթության և գիտության, առողջապահության, տարածքային կառավարման, ինչպես նաև ՀՀ ոստիկանությունն ու վիճակագրական ծառայությունը:

Մաս առաջին
Նվաճումների և մարտահրավերների գնահատում՝ 1995 թվականից ի վեր

Անցած ժամանակահատվածում կանանց վիճակի բարելավման ոլորտի քաղաքականության մեջ տեղի են ունեցել բազմաթիվ փոփոխություններ, որոնք կարծում ենք կարելի է դասել այս ոլորտում Հայաստանի նվաճումների շարքում, մասնավորապես՝ վերանայվել և բարեփոխվել է օրենսդրությունը, ստեղծվել են ինստիտուտներ, ներդրվել են մեխանիզմներ, իրականացվել են հետազոտական, ուսումնական, քարոզչական ծրագրեր, պարբերաբար վերանայվում են բնակչության սոցիալական պաշտպանության պետական ծրագրերը, քաղաքականության մեջ կատարվել է անցում կանանց հիմնախնդիրներից դեպի գենդերային հիմնախնդիրներ: Այս զարգացումների վերաբերյալ տեղեկատվությունն ընդգրկվել է Հայաստանի կողմից նախապատրաստած և ՄԱԿ տարբեր կառույցներին փոխանցված բազմաթիվ զեկույցներում:

ՄԱԿ-ի Հազարամյակի մարտահրավերների իրականացման արդյունքների վերաբերյալ վերջին զեկույցում ՀՀ-ին առնչվող հատվածում նշվում է, որ երկիրը հաջողությամբ մոտենում է 3-րդ նպատակի իրականացմանը (գենդերային հավասարություն):

Պեկինի հանձնարարականների կատարմանն ուղղված աշխատանքները պայմանականորեն կարելի է բաժանել երեք փուլի, որից յուրաքանչյուրը նախորդի տրամաբանական շարունակությունն է: Ստորև բերված սեղմ ակնարկը ցույց է տալիս ոլորտում աստիճանաբար տեղի ունեցող փոփոխությունների և ձեռքբերումների ժամանակագրությունը:

Այսպես, առաջին փուլում (1996-2002թթ.) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կառուցվածքում ստեղծվեց համապատասխան ստորաբաժանում՝ ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչություն, որի կանոնադրական խնդիրների մեջ, ի թիվս այլ հարցերի, ներառվեցին կանանց

հիմնախնդիրները: Այնուհետև մշակվեց “Կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման” առաջին եռամյա ազգային ծրագիրը, կատարվեց ՀՀ օրենսդրության (մի շարք հիմնական օրենքների) գենդերային փորձաքննություն, մշակվեցին առաջարկություններ, միջազգային կազմակերպությունների օժանդակությամբ մեկնարկեցին կարողությունների հզորացման ծրագրեր, որի շրջանակներում վերապատրաստվեցին շահագրգիռ պետական կառավարման մարմինների մասնագետները, ոլորտին առնչվող խնդիրների շուրջ հանրապետության ողջ տարածքում կազմակերպվեցին քննարկումներ, իրականացվեցին կանանց խնդիրները լուսաբանող քարոզարշավներ :

Կատարված աշխատանքները նախադրյալներ ստեղծեցին հաջորդ փուլի համար (2002-2008թթ.): Մի շարք վերլուծություններ ցույց տվեցին, որ անհրաժեշտություն է առաջացել ընդլայնել գործող կառույցի լիազորությունների շրջանակը՝ կանանց հիմնախնդիրների լուծմանն ուղղված նպատակային ծրագրերն իրականացնելու, գործադիր իշխանության մարմիններում կանանց հիմնահարցերին վերաբերող գործունեությունը համակարգելու և վերահսկելու, կանանց հիմնախնդիրների իրավական կարգավորմանն ուղղված առաջարկներ ներկայացնելու, ինչպես նաև օրենսդիր և դատական իշխանությունների, ոչ կառավարական կազմակերպությունների հետ համագործակցությունն ապահովելու համար:

Այս ամենն արտացոլվեց ՀՀ կառավարության 2004 թվականի ապրիլի 8-ի N645-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010թթ. երկրորդ ազգային ծրագրում:

Միաժամանակ սկիզբ առան պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում գենդերային քաղաքականության իրականացման կառուցակարգի ներդրման և գենդերային ուսուցման գործընթացները:

2005 թվականին մարզպետարաններում և Երևանի քաղաքապետարանում ստեղծվեցին երեխայի իրավունքների պաշտպանության բաժիններ, որոնց կանոնադրության մեջ ամրագվեցին մարզում գենդերային քաղաքականության պետական նպատակային ծրագրերի մշակման, իրականացման և համակարգման աշխատանքների ապահովման հետ կապված խնդիրներ:

Զուգահեռ մեկնարկեց դեռևս 2001 թվականին հանրապետության պետական և տարածքային կառավարման մարմիններում ներդրված քաղաքացիական ծառայության համակարգի ծառայողների որակավորման բարձրացման գործընթացը, ուղղված նրանց գենդերային մտածելակերպի ձևավորմանը, գենդերային գիտելիքների հաղորդմանն ու գենդերային զգայունության բարձրացմանը: ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 2008թ. հուլիսի 8-ի N 567-Ն որոշմամբ հաստատված «Մարդու իրավունքներ» և «Գենդերային հիմնախնդիրներ» թեմաներով վերապատրաստման ծրագրերում ներդրվեց գենդերային գիտելիքների հաղորդման բաղադրիչ (մոդուլ): ՀՀ պետական բյուջեի

ֆինանսավորմամբ իրականացվող պարտադիր վերապատրաստման դասընթացներին յուրաքանչյուր տարի մասնակցում են շուրջ 200 քաղծառայողներ: Ըստ էության, այս գործընթացներն էին, որ բերեցին պետական քաղաքականության անցմանը կանանց հիմնախնդիրներից դեպի գենդերային հիմնախնդիրներ, թելադրելով նոր մոտեցումներ հասարակության քաղաքական, սոցիալական, տնտեսական խնդիրների ձևակերպման և դրանց լուծման հարցում:

Այդ համատեքստում մշակվեց ՀՀ-ում գենդերային քաղաքականության հայեցակարգը, որը հաստատվեց ՀՀ կառավարության 2010 թվականի փետրվարի 11-ի որոշմամբ: Հայեցակարգը նպատակաուղղված էր երկու սեռերի համար հավասար պայմանների ստեղծմանը, սեռի հատկանիշով խտրականության բոլոր ձևերի հաղթահարմանը, աշխատանքի շուկայում և զբաղվածության ոլորտում կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների և տնտեսական ռեսուրսների հավասար մատչելիության ապահովմանը, հասարակության մեջ ժողովրդավարական քաղաքական մշակույթի և հանդուրժողականության, գենդերային երկխոսության ձևավորմանը՝ կյանքի բոլոր ոլորտներում գենդերային չափանիշի ներառման միջոցով:

ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 13-ի N 618-Ն որոշմամբ հաստատված ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության մեջ ամրագրվեցին որպես խնդիրներ գենդերային հիմնահարցերի ուսումնասիրությունը, դրանց լուծման պետական ծրագրերի մշակումը, իրականացման աշխատանքների համակարգումը և մոնիթորինգը, ինչպես նաև մարդկանց առքուվաճառքի (թրաֆիքինգ) հիմնահարցերի ուսումնասիրությունը, թրաֆիքինգի ենթարկված անձանց սոցիալական վերականգնման ծրագրերի մշակումը և դրանց իրականացման մոնիթորինգը:

Հայեցակարգում առաջադրված հիմնախնդիրների լուծման նպատակով ՀՀ կառավարության կողմից հաստատվեցին նպատակային ռազմավարական ծրագրեր: ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 20-ի որոշմամբ հաստատվեց Գենդերային քաղաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագիրը, որը սահմանեց կանանց և տղամարդկանց նկատմամբ պետական քաղաքականության առաջնահերթ ուղղությունները:

Յուրաքանչյուր տարի ռազմավարական ծրագրով նախանշված նպատակներն իրականացնելու համար ՀՀ կառավարության կողմից հաստատվում են գենդերային քաղաքականության ամենամյա/տարեկան ծրագրեր: Դրանցում ներառված միջոցառումներն ուղղված են կառավարման ոլորտում և որոշումների ընդունման մակարդակում, սոցիալ-տնտեսական, կրթության, առողջապահության, մշակույթի և հանրային տեղեկատվության ոլորտներում ազգային և տարածաշրջանային մակարդակներում քաղաքականության մշակման մեջ և քաղաքական պրակտիկայում գենդերային բաղադրիչի ներառմանը, ինչպես նաև հասարակական կյանքի բոլոր ոլորտներում գենդերային անհավասարակշռության հաղթահարմանը, անկախ սեռից, հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ձեռքբերմանը:

Ձևավորված ինստիտուցիոնալ մեխանիզմներն ամրապնդելու և զարգացնելու նպատակով 2011թ. ՀՀ մարզպետարաններում և Երևանի քաղաքապետարանում, Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում (12 վարչական շրջան)

համապատասխանաբար մարզպետների և Երևանի քաղաքապետի կարգադրությամբ ստեղծվեցին Գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովներ:

Հանձնաժողովներն աջակցում են մարզում և Երևան քաղաքում գենդերային քաղաքականության և գենդերային բռնության դեմ պայքարի ամենամյա/տարեկան ծրագրերի մշակման և դրանց իրականացման աշխատանքներին, համայնքներում գենդերային քաղաքականության ներուղղման իրականացմանը, մարզում և Երևան քաղաքում գործող շահագրգիռ մարմինների, հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության մեխանիզմների ամրապնդմանը:
Ներկայիս փուլը եզրափակող կարևոր ձեռքբերումներից է 2013 թվականի մայիսին «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի ընդունումը, որը սահմանում է քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման երաշխիքները և կարգավորում է դրանց առնչությամբ ծագող հարաբերությունները:

<u>Օրենսդրական երաշխիքներ</u>

Հայաստանի Հանրապետությունն իր օրենսդրությամբ ապահովում է տղամարդկանց և կանանց հավասար իրավունքներ և այդ իրավունքներից օգտվելու հավասար հնարավորություններ: Սահմանելով մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքներն ու ազատությունները՝ Սահմանադրությամբ նշվում են «յուրաքանչյուր ոք» կամ «յուրաքանչյուր քաղաքացի» արտահայտությունները՝ չվերագրելով դրանք կանանց կամ տղամարդկանց:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը հնարավորինս կոչված է ապահովելու տղամարդկանց և կանանց իրավահավասարությունը հասարակական և քաղաքական կյանքում:

Մասնավորապես՝ *ՀՀ Սահմանադրության* 14.1 հոդվածի համաձայն բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև: Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

ՀՀ աշխատանքային օրենսգիրքը, որն ընդունվել է 2004թ. հոկտեմբերի 11-ին և ուժի մեջ է մտել 2005թ. հունիսի 21-ին, որպես սկզբունքներ սահմանում է աշխատանքի ազատությունը, ներառյալ աշխատանքի իրավունքը, ցանկացած ձևի (բնույթի) հարկադիր աշխատանքի և աշխատողների նկատմամբ բռնությունների արգելումը, աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավահավասարությունը՝ անկախ նրանց սեռից, ռասայից, ազգությունից, լեզվից ծագումից, քաղաքացիությունից, սոցիալական դրությունից, դավանանքից,

ամուսնական վիճակից և ընտանեկան դրությունից, տարիքից, համոզմունքներից կամ տեսակետներից, կուսակցություններին, արհեստակցական միություններին կամ հասարակական կազմակերպություններին անդամակցելուց, աշխատողի գործնական հատկանիշների հետ չկապված այլ հանգամանքներից, յուրաքանչյուր աշխատողի համար աշխատանքի արդարացի պայմանների իրավունքի ապահովումը, աշխատողների իրավունքների և հնարավորությունների հավասարությունը:

ՀՀ ընտրական օրենսգրքի (ընդունվել է 2011թ. մայիսի 26-ին, ուժի մեջ է մտել 2011թ. հուլիսի 26-ին) 3-րդ հոդվածով սահմանվում է ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, ընտրելու և ընտրվելու իրավունքը: Այսինքն՝ ՀՀ ընտրական օրենսգիրքը ևս բացառում է ամեն տեսակ խտրականություն, այդ թվում և սեռական:

ՀՀ քրեական օրենսգրքի (ընդունվել է 2003թ. ապրիլի 18-ին, ուժի մեջ է մտել 2003թ. օգոստոսի 1-ին) 143-րդ հոդվածով հանցանք է համարվում քաղաքացիների իրավահավասարությունը խախտելը, մասնավորապես, մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատություններն ուղղակի կամ անուղղակի խախտելը՝ կախված անձի ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, որը վնաս է պատճառել անձի օրինական շահերին, ինչով և քրեականացվում է Սահմանադրության 14.1 հոդվածի խախտումը:

ՀՀ ընտանեկան օրենսգիրքը (ընդունվել է 2004թ. նոյեմբերի 9-ին, ուժի մեջ է մտել 2005թ. ապրիլի 19-ին) փաստում է ամուսինների իրավահավասարությունն ընտանիքում (24-րդ հոդված) նշելով, որ ամուսիններից յուրաքանչյուրն ազատ է աշխատանք, զբաղմունք, մասնագիտություն, բնակության վայր ընտրելու հարցում: Ամուսնության կնքման համար անհրաժեշտ են ամուսնացող տղամարդու և կնոջ փոխադարձ կամավոր համաձայնությունը և նրանց ամուսնական տարիքի հասնելը:

Անդրադառնանք նաև մի շարք կարևոր ոլորտների առնչվող օրենսդրությանը:

Սահմանադրության 39-րդ հոդվածում ամրագրվել է կրթության իրավունքը՝ <<Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է: Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է: Յուրաքանչյուր քաղաքացի ունի մրցութային հիմունքներով անվճար պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում կրթություն ստանալու իրավունք՝ օրենքով սահմանված կարգով: Պետությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ֆինանսական և այլ աջակցություն է ցուցաբերում բարձրագույն և այլ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին և դրանցում սովորողներին>>: 1999թ. ՀՀ Ազգային Ժողովն ընդունել է <<Կրթության մասին>> ՀՀ օրենքը, որը՝ հիմնվելով սահմանադրական դրույթների վրա, որոշակիորեն ուղղորդում է կրթության համակարգի զարգացումը: Այս օրենքում ամրագրվել են

կրթական իրավունքի պետական երաշխիքները, համաձայն որի՝ <<ՀՀ-ն ապահովում է կրթության իրավունք՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից կամ այլ հանգամանքներից>>: Այս օրենքում ապահովվել է նաև կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը: <<Կրթության մասին>> ՀՀ օրենքի կիրարկումից հետո ընդունվել են նաև կրթության առանձին ոլորտները կանոնակարգող իրավական ակտեր: Մասնավորապես՝ 2004թ. ընդունվել է <<Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին>> ՀՀ օրենքը: 2005թ. ընդունվել է <<Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին>> ՀՀ օրենքը: 2009թ. ընդունվել է <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքը: Այս օրենքներով կարգավորվում են կրթության տարբեր մակարդակներում ՀՀ պետական քաղաքականության սկզբունքները, կազմակերպական-իրավական և ֆինանսատնտեսական հիմքերը, կրթության գործընթացին մասնակից ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավահարաբերությունները, ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված տարբեր կրթամակարդակներում կրթության իրավունքի հիմքերը և այլն: Հիշյալ օրենքների ընդունումից հետո հաստատվել են նաև մի շարք իրավական ակտեր, որոնք օժանդակել են այս օրենքների ճիշտ կիրարկմանը:

Համաձայն «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի, 1996թ. կանանց համար երաշխավորված է տղամարդկանց հավասար բուժօգնությունից օգտվելու իրավունքը:
Մոր և մանկան առողջության պահպանումը ընդունվել է որպես հիմնական գերակայություն և գտնվում է պետության հովանավորության ներքո:
Մշակվել են վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքներին առնչվող բժշկական գործելակերպը և իրավական դաշտը կանոնակարգող օրենքներ, կառավարության որոշումներ, մի շարք նորմատիվ - մեթոդական փաստաթղթեր:

2011թ. հաշվի առնելով կանանց մահացության և հիվանդացության կառուցվածքում վերարտադրողական օրգանների, այդ թվում կրծքագեղձի և արգանդի վզիկի քաղցկեղից բարձր մահացությունը, այդ հիվանդությունների կանխարգելման, մահացության իջեցման նպատակով հաստատվեց «Առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման, վաղ հայտնաբերման և բուժման հայեցակարգին և հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» որոշումը, որի շրջանակներում այնուհետև հատատվեց «Առավել բարձր մահացության բերող երեք հիվանդության՝ արյան շրջանառության համակարգի(սրտանոթային հիվանդություններ) չարորակ նորագոյացությունների և շաքարային դիաբետի ազգային ռազմավարական ծրագրերին և միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» որոշումը:

2011թ. ընթացքում ՀՀ կառավարության թիվ 318-Ն և 748-Ն որոշումներում կատարվել են համապատասխան փոփոխություններ և 2011թ. սկսվել է 14-15 տարեկան տղաների և 15 տարեկան աղջիկների համալիր առողջական վիճակի, այդ

թվում վերարտադրողական համակարգի հետազոտում, ախտաբանությունների հայտնաբերում և բուժում, ինչը լուրջ գրավական է դեռահասների առողջության բարելավման, առողջ ծնող դառնալու և անպտղության կանխարգելման համար:

Ամենախոշոր և արդյունավետ բարեփոխումը ՀՀ վարչապետի 2007 թվականի սեպտեմբերի 11-ի հանձնարարականի կատարումն էր, որի շրջանակներում 2008 թվականի հուլիսի մեկից «Մանկաբարձագինեկոլոգիական օգնություն' բյուջետային ծրագրի շրջանակներում ներ է դրվել և հաջողությամբ իրականացվում է «Ծննդօգնության պետական հավաստագրի» համակարգը, ինչն ապահովում է իրական, փաստացի ամբուլատոր և ստացիոնար անվճար ծննդօգնություն:
Այդ բարեփոխումներն ուղղված են հատկապես անապահով խավերին օժանդակելուն, կանանց բուժօգնության որակի և մատչելիության բարձրացմանը, հատկապես անհավասարության և տարբերությունների վերացմանը կախված, բնակավայրից գյուղ-քաղաք կտրվածքով, ընտանիքի նյութական ապահովվածության աստիճանից, կրթական մակարդակից կայլն:
Թեև օրենսդրությունը բավանին բարենպաստ է այս ոլորտում, այնուամենայնիվ կանանց իրավիճակի վերլուծությունը փաստում է վերարտադրողական առողջության պահպանման խնդիրների հետ կապված որոշ սահմանափակումների մասին, մասնավորապես, կանանց համար առավել արդյունավետ հակաբեղմնավորիչների և որոշ դեղորայքի (հղիության դեղորայքային ընդհատման համար անհրաժեշտ) մատչելիության առումով, վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու սահմանափակ հնարավորության, ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց համար:
ՀՀ առողջապահության նախարարի 07.03.2013թ. N544-Ա հրամանով հաստատվել են «Հղի կանանց, կրծքի և վաղ հասակի երեխաների սնուցման գործելակարգի վերաբերյալ ձեռնարկները»՝ ծննդօգնության և ԱԱՊ հաստատությունների բուժաշխատողների համար, հղիներին և կերակրող մայրերին ուղղված հանրային իրազեկման նյութերը:

Պետք է նշել, որ շարունակվում են նաև ազգային օրենսդրության լրամշակման աշխատանքները:
Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների պահանջներին ընդառաջ 2013 թվականի ապրիլի 30-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել և 2013թ. հունիսի 8-ին ուժի մեջ է մտել «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքը, որի հիմնական նպատակը հանդիսանում է տղամարդկանց և կանանց միջև գենդերային հավասարության ապահովումը: Եթե մինչ այդ Ընտանեկան օրենսգրքով ամուսնության կնքման համար տարիքային չափանիշ էր սահմանված կանանց համար՝ 17, իսկ տղամարդկանց համար՝ 18 տարեկան տարիքի հասնելը, ապա այս փոփոխությամբ և կանանց, և տղամարդկանց համար սահմանվում է միևնույն՝ 18 տարեկան ամուսնական տարիքը:
2010 թվականի օգոստոսի 7-ի ՀՀ ԱԺ կողմից ընդունված «Աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-117-Ն) 40-րդ հոդվածի երկրորդ կետով նախատեսվում է փոփոխություն Աշխատանքային օրենսգրքի 114-րդ հոդվածի 2.1 կետում, ըստ որի, գործատուի

նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը չի կարող լուծվել հղի կանանց հետ՝ հղիության մասին գործատուին տեղեկանք ներկայացնելու օրվանից մինչև հղիության և ծննդաբերության արձակուրդի ավարտման օրվանից հետո մեկ ամիսը լրանալը:
Հաշվի առնելով այն, որ հանրապետությունում դեռևս չի ձևավորվել գենդերային իրավունքների խախտման հետ կապված բողոքների/հայցադիմումների ներկայացման մշակույթ, հստակ պատասխանատվության փոխարինումը (աշխատանքային կարգապահության կոպիտ խախտումներին վերաբերող 221-րդ հոդվածը ուժը կորցրած է ճանաչվել) ավելի դեկլարատիվ ձևակերպմամբ, առավել իջեցնում է գործատուի պատասխանատվության շեմը:
Անփոփոխ են մնացել հղիության, ծննդաբերության և երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդների տևողությունը և ընթացակարգերը:
Նոր է օրենսգրքում այն դրույթը, համաձայն որի աշխատողի պահանջով մինչև երկու ամիս չվճարվող արձակուրդ տրամադրվում է հղիության ու ծննդաբերության արձակուրդում գտնվող, ինչպես նաև մինչև մեկ տարեկան երեխային խնամելու համար արձակուրդում գտնվող կնոջ ամուսնուն (ՀՀ ԱՕ, հոդ.176): Ըստ էության այս դրույթն այդքան էլ գործնական չէ, քանի որ հորը տրամադրվող արձակուրդը չի վճարվում և շահագրգռվածությունն օգտվելու այդ իրավունքից այդքան էլ մեծ չէ:

Գենդերային տեսանկյունից զգայուն են օրենսգրքի այն հոդվածները, որոնք կանոնակարգում են արտաժամյա աշխատանքները (հոդ.144), աշխատանքները գիշերային ժամերին, հերթապահությունը, ամենշաբաթյա անընդմեջ հանգիստը: Նշված հոդվածները սահմանում են երեխա խնամող աշխատողների (թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց) ընտանեկան պարտականությունների կատարման հետ կապված իրավունքները: Այս առումով բացառություն է կազմում օրենսգրքի 258 հոդվածը (մայրության պաշտպանություն), որն արգելում է հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց ներգրավումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ծանր, վնասակար, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանքներին:

2011 թվականի հունվարի 1-ին ՀՀ ԱԺ (ՀՕ-243-Ն) կողմից ընդունվել է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք, որով սահմանվում է կանանց համար արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակելու պայմանները և ժամկետները:

2013 թվականի հոկտեմբերի 3-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ ԱԺ որոշումը (ԱԺՈ-080-Ն), որով նախատեսվել է պատժից ազատել որոշման ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ հղի կանանց կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձանց:

Ի լրումն վերոշարադրյալի, հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետությունում ընդունվել են կանանց վիճակը բարելավող մի շարք իրավական ակտեր ևս: Մասնավորապես՝ 2009 թվականի ապրիլի 2-ի Կառավարության N 351-Ն «Ձերբակալված և կալանավորված անձանց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից ուղեկցման և պահպանման կարգը հաստատելու մասին» որոշման մեջ ձերբակալված և կալանավորված անձանց ուղեկցման

առանձնահատկությունները թվարկելիս նշվում է, որ բուժաշխատող է հրավիրվում ակնհայտ հղիության նշաններ ունեցող կանանց ուղեկցման ընդունելիս: Բուժզննության արդյունքների, ինչպես նաև բժշկի կողմից ուղեկցումը թույլատրելու կամ արգելելու մասին գրառում է կատարվում անձնական գործում:

Մշակվել և ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել <<Սոցիալական աջակցության մասին>> ՀՀ նոր օրենքի նախագիծը, որն արդեն ներկայացվել է Ազգային ժողով:

<<Պետական նպաստների մասին>> ՀՀ օրենքը պարունակում է մի շարք դրույթներ, ուղղված մայրության պաշտպանությանը: Այն վերաբերվում է ընտանեկան նպաստներին, երեխայի խնամքի և երեխայի ծննդյան կապակցությամբ տրամադրվող միանվագ նպաստներին: Հաշվետու ժամանակահատվածում տեղի են ունեցել որոշակի փոփոխություններ՝ թե՛ ծրագրերի ֆինանսական արժեքների մասով, թե՛ քաղաքականության: Այսպես, եթե մինչև 2009 թվականը գումարը տրամադրվել է միայն ընտանեկան նպաստի համակարգում հաշվառվածներին, ապա սկսած 2010 թվականից երեխայի ծննդյան կապակցությամբ միանվագ դրամական օգնություն ստանում են բոլորը, անկախ համակարգում ընգրկված լինելուց: 2012 թվականին առաջին և երկրորդ երեխայի ծննդյան կապակցությամբ ծնողին հատկացվող գումարը կազմել է 50000 AMD, սկսած երրորդից – 430 000 AMD յուրաքանչյուր նորածնի համար: 2014 թվականին որոշակի փոփոխություններ են տեղի ունեցել: Առաջին երկու երեխաների ծննդյան կապակցությամբ միանվագ նպաստի չափը մնացել է անփոփոխ և կտրուկ աճել է ընտանիքում 3-րդ և ավելին երեխայի ծնվելու դեպքում. 3-րդ և 4-րդ երեխաների համար գումարը ներկայում կազմում է 1000000 ՀՀ դրամ, 5-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար՝ 1500000 ՀՀ դրամ: Ընդ որում 3-րդ և հաջորդ երեխայի ծնվելու դեպքում տրվող՝ երեխայի ծննդյան միանվագ նպաստի պետական աջակցության հաշվին փոխանցած միջոցներից ձևավորվում է նաև ընտանեկան դրամագլուխ:

Բացի ներպետական օրենսդրական ակտերից, Հայաստանում կնոջ իրավունքները պաշտպանվում են նաև ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերով: Հայաստանը անդամակցում է կանանց իրավունքների պաշտպանությանն ուղղված մի շարք միջազգային պայմանագրերի, մասնավորապես, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիային, Կանանց քաղաքական իրավունքների մասին կոնվենցիային, Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիան լրացնող «Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին» արձանագրությանը: ՀՀ վավերացրել է Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը (2006 թվականի սեպտեմբերի 14), ինչը

հնարավորություն է տվել ՀՀ քաղաքացիներին բողոքներ ուղղել Կանանց հանդեպ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոմիտեին:

Չնայած ձեռնարկվող քայլերին ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում շարունակում են մնալ այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են կանանց առավել ընդգրկվածությունը քաղաքական և հասարակական կյանքում, տնտեսական մասնակցության խթանումը, աղքատության հաղթահարումը, գենդերային հավասարության ինստիտուցիոնալ մեխանիզմների ամրապնդումը, սոցիալական և առողջապահական ոլորտների մի շարք կարևոր հարցեր:

ՄԱՍ Երկրորդ

2009 թվականից ի վեր Պեկինի Գործողությունների ծրագրի հիմնական հատվածի իրականացման առաջընթացը

Աղքատության հաղթահարում

2000թ. սեպտեմբերին Հազարամյակի հռչակագրով ՄԱԿ-ի 189 անդամ երկրները, պարտավորություն ստանձնեցին մինչև 2015թ. հասնել Հազարամյակի զարգացման ութ նպատակների /ՀԶՆ / կատարմանը: Միանալով հռչակագրին՝ Հայաստանն, ըստ էության, պարտավորություն ստանձնեց իր ազգային երկարաժամկետ և ռազմավարական ծրագրերում ներառել Հազարամյակի զարգացման նպատակները, ինչպես նաև իրականացնել տնտեսական աճը մարդկային զարգացմանն ուղղորդելու հստակ ռազմավարական ծրագրեր: Միջազգային կազմակերպությունների աջակցությամբ Հայաստանում մշակվեց “Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի” /ԱՀՌԾ/ մեխանիզմը, և ՀՀ կառավարության որոշմամբ 2000 թվականի մայիսից Հայաստանում սկսվեց ԱՀՌԾ գործընթացը: 2008թ. Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը (ԱՀՌԾ-ն) ներառում էր 2003-2015թթ. ծրագրային ժամանակահատվածը: Այն, ըստ էության ՀՀ անկախության ձեռքբերումից հետո ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման առաջին երկարաժամկետ ռազմավարական ծրագիրն էր: Սակայն 2006-ից հետո կարիք եղավ վերանայելու ԱՀՌԾ իրականացման հիմնական արդյունքները, ռազմավարական ծրագիրը, ցուցանիշներն ու գերակայությունները և 2008թ.-ին այն ենթարկվեց որոշակի փոփոխությունների և վերանվանվեց Կայուն զարգացման ծրագիր՝ հաշվի առնելով, որ այն բովանդակությամբ և կառուցվածքով որոշակիորեն տարբերվում է նախորդից, ունի ավելի լայն ընդգրկում և հանդիսանում է երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, որը նախատեսված է 2008-2021թթ. համար:

Հայաստանի Հանրապետության զարգացման քաղաքականության ներկա օրակարգը ենթադրում է տնտեսական աճի ապահովման գործում հասարակության հնարավորինս ընդգրկուն մասնակցության երաշխավորումը: Այս իմաստով սոցիալ-տնտեսական երկարաժամկետ զարգացման տեսակետից կարևորվում է ներառական աճի համար անհրաժեշտ հիմքերի ապահովումը: Պետք է փաստել, որ

վերջին տարիներին տնտեսությանը կանանց մասնակցությունը դինամիկ կերպով ընդլայնվում է, ինչը նաև անհրաժեշտ երաշխիքներ և կայուն հիմքեր է ստեղծում հասարակությունում կանանց և տղամարդկանց աղքատության, եկամուտների ու սպառման մակարդակների միջև խզվածքի կրճատման համար:
Այսպես, օրինակ, համաձայն ազգային պաշտոնական վիճակագրության՝ աղքատության մակարդակի տարբերությունն ըստ սեռի նշանակալի չէ. 2011թ. բնակչության 35% աղքատության մակարդակի պարագայում կանանց և տղամարդկանց աղքատության մակարդակները կազմել են համապատասխանաբար 34.5% և 35.5%, իսկ աղքատ բնակչության մեջ կանանց մասնաբաժինն 8 տոկոսային կետով ցածր է տղամարդկանց մասնաբաժնից: Եթե տղամարդկանց և կանանց մեկ շնչի հաշվով միջին ամսական դրամական եկամուտների միջև խզվածքը 2009 թվականին եղել է մոտ 2 անգամ, ապա 2011 թվականին այն արդեն 1.7 անգամ է: Դինամիկ առաջընթաց է արձանագրվում նաև զբաղվածության բնագավառում: 2011 թվականին չնայած նախորդ տարվա համեմատ զբաղվածների ընդհանուր թվաքանակի նվազման, զբաղված կանանց թիվն աճել է 23,800 մարդով, ընդ որում՝ տնտեսական գործունեության գրեթե բոլոր տեսակների գծով:

Նշված ցուցանիշները վկայում են, որ տնտեսությունում կանանց մասնակցությունը խրախուսող քաղաքականության միջոցառումներն արդեն իսկ սկսել են դրական արդյունքներով ամրագրվել: Կանանց մասնակցության և զբաղվածության ընդլայնումը հատկապես խրախուսվում է գործարարության զարգացման տարբեր գործիքների ու մեխանիզմների միջոցով: Առկա հնարավորություններից հավասարապես օգտվելու իրավունքի երաշխավորմանն ուղղված՝ տնտեսական քաղաքականությունը նախևառաջ արտացոլվում է ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 20-ի Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագրում և դրանից բխող միջոցառումների տարեկան ծրագրում ամրագրված ուղղություններով:

Կանանց կրթությունը և մասնագիտական ուսուցումը

Կրթության հավասար մատչելիության/հասանելիության ապահովումը

Համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների, անգրագետ և տարրական ու թերի տարրական կրթություն ունեցողները կազմում են բնակչության ընդամենը 3.1%-ը, իսկ 10 տարեկանից բարձր տարիքային խմբի շուրջ 30%-ն ունի որևէ մակարդակի մասնագիտական կրթություն: Չափահասների ու երիտասարդների գրագիտության մակարդակը կազմում է շուրջ 99% և այս առումով որևէ էական գենդերային անհավասարություն գոյություն չունի[1]>>:

[1] Հայաստան. Հազարամյակի զարգացման նպատակների առաջընթացի ազգային զեկույց – 2010թ.

Այս հանգամանքը փաստում են նաև 2011 թվականին անցկացված ՀՀ մարդահամարի տվյալները, համաձայն որի՝

- 15-24 տարեկանների գրագիտության մակարդակը կազմել է 99.8%,
- 15-24 տարեկան գրագետ կանանց և տղամարդկանց թվաքանակների հարաբերակցությունը կազմել է 1.01,
- 15 և բարձր տարիքի մշտական բնակչության գրագիտության մակարդակը կազմել է 99.7%:

Հայաստանում կրթությունը սահմանվում է որպես կայուն մարդկային զարգացման նախապայմաններից մեկը, իսկ ոլորտի զարգացումը՝ որպես երկրի առաջնային գերակայություններից մեկը: Ոլորտի զարգացման քաղաքականությունը համահունչ է ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի <<Կրթություն՝ հանուն կայուն զարգացման>> ռազմավարությանը և ուղղված է այն բանին, որ բարեփոխումների արդյունքները նշանակալի ազդեցություն ունենան երկրում տնտեսական աճի, աղքատության կրճատման, անհավասարության մեղմման, էկոլոգիական անվտանգության ապահովման և մարդկային զարգացման գործընթացների վրա ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ հեռանկարում: Հավասարապես մատչելի որակյալ կրթության ապահովման և կրթության ոլորտի արդյունավետության բարձրացման նպատակով երկրում իրականացվում են բարեփոխումներ կրթական բոլոր մակարդակներում: Այդ բարեփոխումներին աջակցում են նաև առանձին ռազմավարություններ ու հայեցակարգեր:

Ինչպես նշեցինք, 2008թ. ՀՀ կառավարության կողմից հաստատվել է <<Կայուն զարգացման ծրագիրը>> (նախկինում՝ <<Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը>>), որը 2012 թվականին վերանայվել է որպես՝ <<ՀՀ 2012-2015թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր>>: Նշված ծրագրերում որպես առաջնային ուղղություններ համարվում են կրթության որակի և բոլոր մակարդակներում կրթության հավասար մատչելիության ապահովումը:

ՀՀ Ազգային Ժողովի կողմից 2011 թվականին ընդունվել է <<Կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիր>> ՀՀ օրենքը, որի հիմքում դրվել են նաև ՀՀ կառավարության հաստատած կրթության առանձին ոլորտների ռազմավարական ծրագրերը և զարգացման հայեցակարգերը: Հիմք ընդունելով կրթության համակարգի արդեն իսկ արձանագրված ձեռքբերումները՝ ծրագիրն ուղղված է դրանց աստիճանական զարգացմանը՝ նախանշելով ոլորտի զարգացման գերակա ուղղություններն ու ռազմավարությունները: Մասնավորապես այս ծրագրում սահմանվել են հետևյալ նպատակները[2].

1. *բոլոր մակարդակներում բարձրացնել կրթության մատչելիությունը, ստեղծել հավասար հնարավորություններ, որ յուրաքանչյուրը ստանա առավել որակյալ կրթություն՝ իր նախասիրություններին և ընդունակություններին համապատասխան, մասնավորապես՝*

[2] <<Կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիր>> ՀՀ օրենք

- տարրական և միջին դպրոցում համախառն ընդգրկվածությունը հասցնել 99%,
- ընդլայնել դպրոցահասակ երեխաների, ներառյալ՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, ազգային փոքրամասնությունների և խոցելի մյուս բոլոր խմբերի երեխաների, որակյալ հիմնական կրթություն ստանալու հնարավորությունները՝ ստեղծելով ներառական կրթության հնարավորություններ բոլոր հանրակրթական դպրոցներում,
- ավագ դպրոցում, ներառյալ՝ նախնական մասնագիտական ծրագրերը, համախառն ընդգրկվածությունը հասցնել 95%,
- 10%-ով մեծացնել ընդգրկվածությունը մասնագիտական կրթական ծրագրերում, հատկապես՝ ի հաշիվ խոցելի խմբերի երիտասարդների.

2. *բարելավել կրթության որակը՝ այն համապատասխանեցնելով միջազգային ընդունված չափանիշներին, ապահովելով հասարակության և գործարար միջավայրի բավարարվածությունը մատուցվող կրթական ծառայություններից,*

3. ապահովել պետական բյուջեից կրթությանը հատկացվող միջոցների շարունակական աճ և դրանց արդյունավետ օգտագործման մեխանիզմներ, մասնավորապես՝ պետական բյուջեից կրթությանը տրվող միջոցների մակարդակը հասցնել մինչև ՀՆԱ-ի 4%:

Ընդգրկվածությունը հանրակրթության մեջ

<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի համաձայն՝ <<Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է 12-ամյա միջնակարգ կրթություն: Հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է>>:

Հանրակրթության տարբեր մակարդակներում՝ ըստ սեռի ընդգրկվածության ցուցանիշների, կարելի է անել հետևյալ դիտարկումները: Հայաստանում հանրակրթության մեջ ընդգրկվածության էական խնդիր չկա: Համեմատական առումով համախառն ընդգրկվածությունը միջնակարգ կրթությունում բավականին բարձր է. վերջին տարիներին այն միջինում կազմել է մոտ 90%:

2012 թվականին սովորողների ամենամեծ ընդգրկվածություն եղել է տարրական կրթության (1-4-րդ դասարաններ) օղակում՝ 95.2%[3]: Դա բացատրվում է թերևս նրանով, որ դպրոցում սովորողների գրագիտությունը հիմնականում ձևավորվում է տարրական դպրոցում:

Հիմնական կրթության (1-9-րդ դասարաններ) համակարգում ընդգրկվածությունը մի փոքր նվազում է՝ 94.8%, որը միատարր է տարածքային, գենդերային ու աղքատության խմբերի առումով, և այս իմաստով էական

[3] ՀՀ սոցիալական վիճակը- 2012թ.

անհավասարություններ չկան: Ավագ դպրոցում համախառն ընդգրկվածության ցուցանիշը համեմատաբար ցածր է՝ 74.1%: Սակայն անհրաժեշտ է հաշվի առնել, որ հիմնական կրթությունից հետո սովորողների մոտ 15%-ը ուսումը շարունակում է նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտում, և փաստորեն գրեթե 10%-ը չի շարունակում իր կրթությունը ավագ դպրոցում:

Հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է բոլորի համար, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, թերևս այս հանգամանքով էլ բացատրվում է հիմնական դպրոցում ընդգրկվածության մեծ գործակցի առկայությունը: Ուստի ընդհանուր առմամբ, կարելի է նշել, որ հիմնական կրթությունը հասանելի է բնակչության բոլոր խմբերին և, այս իմաստով, էական անհավասարություններ չեն գրանցվել: Հետևաբար, Հայաստանում ապահովված է բոլոր երեխաների ներգրավվածությունը հիմնական դպրոցում:

Հայաստանում միջնակարգ ընդհանուր կրթությունը ևս անվճար է: Միջնակարգ կրթության (1-12-րդ դասարաններ) համակարգում ընդգրկվածության ցուցանիշը կազմում է 89.2%:

Վերը նշված երևույթների հետ միաժամանակ կարող ենք նշել, որ հանրապետությունում սովորողների ընդհանուր համակազմում առկա է նաև գենդերային անհամամասնություն՝ տարրական և հիմնական դպրոցներում սովորողների շրջանում տղաները գերակշռում են: Սակայն պատկերը փոխվում է ավագ դպրոցում, երբ սովորողների թվաքանակում մեծանում է աղջիկների կշիռը, ինչը փաստում է այն մասին, որ հիմնական կրթությունից հետո առավել հաճախ դպրոցը թողնում են տղաները:

Նշված խնդիրների հաղթահարման տեսանկյունից մինչև 2015 թվականը Հայաստանի զարգացման համար ուղենիշային են <<Հազարամյակի հռչակագրի>> և <<Կրթություն բոլորի համար>> գլոբալ շարժման սահմանած նպատակադրումները: Մասնավորապես Հայաստանը Հազարամյակի զարգացման 2-րդ նպատակի համար սահմանել է, որ մինչև 2015 թվականը համախառն ընդգրկվածությունը հիմնական դպրոցում պետք է հասնի 99%, իսկ ավագ դպրոցում՝ 95%: Կրթության ոլորտի համար սահմանած Հայաստանի Հազարամյակի զարգացման նպատակների ցուցանիշների ժամանակային շարքերը տրված են հավելված 1-ում[4], համաձայն որի 2012 թվականին միջնակարգ կրթության օղակում <<Գենդերային հավասարության ցուցանիշը (տղաների համախառն ընդգրկվածության ցուցանիշի նկատմամբ աղջիկների համախառն ընդգրկվածության ցուցանիշի հարաբերակցության գործակիցը)>> կազմել է 1.06, ընդ որում, տարրական դպրոցում այն կազմել է 1.02, հիմնական դպրոցում՝ 1.02, ավագ դպրոցում՝ 1.21:

Ընդլայնել հասանելիությունը մասնագիտական ուսուցման և գիտատեխնիկական գործունեության ոլորտներում

[4] Հայաստանի Հազարամյակի զարգացման նպատակները ցուցանիշների ժամանակային շարքերը-2013թ.

2001 թվականից ի վեր մասնագիտական կրթական ծրագրերում ընդգրկվածության ցուցանիշները հաստատուն կերպով աճել են, սակայն դրանք դեռ ցածր են Կենտրոնական և Արևելյան Եվրոպա (ԿԱԵ) և Անկախ պետությունների համագործակցություն (ԱՊՀ) երկրների ցուցանիշների համեմատությամբ: 2006 թվականին համախառն ընդգրկվածությունը մասնագիտական ծրագրերում կազմել է մոտ 38%, ընդ որում միայն բարձրագույն և հետբուհական կրթական մակարդակներում՝ մոտ 28%՝ 2003 թ. 21.3%-ի համեմատ (ըստ 2004 թվականի տվյալների՝ ԿԱԵ ու նախկին Խորհրդային Միության երկրներում՝ 43%):

2012 թվականի վիճակագրական տվյալների համաձայն, սովորողների ընդգրկվածության ցուցանիշները մասնագիտական կրթության առանձին մակարդակներում հետևյալն են:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատություններում անվճար ուսուցման համակարգում սովորել է ուսանողների 92.1%-ը, իսկ վճարովի՝ 7.9%-ը, իսկ ուսանողների ընդհանուր թվաքանակի 26.6%-ը կազմել են կանայք:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության ոլորտում ուսանողների համախառն ընդգրկվածության ցուցանիշը կազմել է 4.1% (կանանց՝ 2.3%, տղամարդկանց՝ 5.8%), <<Գենդերային հավասարության ցուցանիշը (տղամարդկանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի նկատմամբ կանանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի հարաբերակցության գործակիցը)>>՝ 0.40:

Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում (ՄՄՈՒՀ-երում) պատկերը փոխվել է հօգուտ կանանց, որտեղ նրանք կազմում են սովորողների թվաքանակի 52.9%-ը: Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում անվճար ուսուցման համակարգում սովորել է ուսանողների 92.1%-ը, իսկ վճարովի՝ 7.9%-ը: Միջին մասնագիտական կրթության ոլորտում ուսանողների համախառն ընդգրկվածության ցուցանիշը կազմել է 11.0% (կանանց՝ 11.9%, տղամարդկանց՝ 10.2%), <<Գենդերային հավասարության ցուցանիշը (տղամարդկանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի նկատմամբ կանանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի հարաբերակցության գործակիցը)>>՝ 1.17:

Ըստ տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության արդյունքների, բարձրագույն կրթական հաստատություններում ընդգրկվածությունը (18-22 տարիքային խումբ) կազմել է 37% [5] : Բարձրագույն մասնագիտական կրթության օղակում ևս սովորողների համակազմում կանայք գերակշռում են: Բակալավրիատում սովորողների համակազմում կանայք կազմում են 52.1%: Բակալավրիատում համախառն ընդգրկվածության ցուցանիշը կազմել է 44.9% (կանանց՝ 46.5%, տղամարդկանց՝ 43.3%): Անվճար ուսուցման համակարգում սովորել է ուսանողների 15.4%-ը, իսկ վճարովի՝ 84.6%-ը: <<Գենդերային հավասարության ցուցանիշը (տղամարդկանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի նկատմամբ կանանց համախառն

[5] Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը – 2013թ.

ընդգրկվածության ցուցանիշի հարաբերակցության գործակիցը)>> բակալավրիատում կազմել է 1.07:

Մագիստրատուրայում սովորողների համակազմում կանայք կազմում են 68.2%, իսկ համախառն ընդգրկվածության ցուցանիշը կազմել է 10.2% (կանանց՝ 13.7%, տղամարդկանց՝ 6.6%): Անվճար ուսուցման համակարգում սովորել է ուսանողների 27.1%-ը, իսկ վճարովի՝ 72.9%-ը, ընդ որում վճարովի ուսուցման համակարգում կանանց թիվը զգալիորեն մեծ է (այստեղ սովորում է կին մագիստրանտների ընդհանուր թվի 76%-ը: <<Գենդերային հավասարության ցուցանիշը (տղամարդկանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի նկատմամբ կանանց համախառն ընդգրկվածության ցուցանիշի հարաբերակցության գործակիցը)>> մագիստրատուրայում կազմել է 2.08:

Սակայն պատկերը կտրուկ փոխվում է հետբուհական կրթության և գիտության ոլորտներում, մասնավորապես ասպիրանտուրայում սովորողների համակազմում կանայք կազմում են 42%, իսկ դոկտորանտուրայում՝ 23.5%:

Գիտահետազոտական աշխատանքներ և մշակումներ իրականացնող մասնագետ-հետազոտողների մեջ կանայք կազմում են 45.1%, ընդ որում՝ գիտության դոկտորների շրջանում կանանց մասնակցության ցուցանիշը կազմում է 19.4%, իսկ գիտության թեկնածուների շրջանում՝ 45.3%:

Հարկ է նշել, որ վերջին տարիներին՝ 2007-2012թթ. ընկած ժամանակահատվածում, մասնագիտական կրթության ոլորտում զգալիորեն աճել են սովորողների համախառն ընդգրկվածության ցուցանիշները: Մասնավորապես, նախնական մասնագիտական կրթության ոլորտում համախառն ընդգրկվածության ցուցանիշը 1.7-ից դարձել է 4.1, միջին մասնագիտականում՝ 8.2-ից դարձել է 11.0, բակալավրիատում այդ աճը չնչին է՝ 44.4-ից դարձել է 44.9, իսկ մագիստրատուրայում ցուցանիշն աճել է գրեթե 3 անգամ՝ 3.4-ից դառնալով 10.2: Ընդ որում, նշված փոփոխությունները հավասարապես անդրադարձել են թե կանանց, թե տղամարդկանց ընդգրկվածության ցուցանիշների վրա:

Ոչ խտրական մոտեցումները մասնագիտության ընտրության և մասնագիտական գործունեության հարցերում

<<Բարձրագույն և հետբուհական կրթության մասին>> ՀՀ օրենքով ամրագրվել են հետևյալ սկզբունքները՝ կրթության մատչելիությունը՝ ըստ յուրաքանչյուրի ընդունակությունների, կրթական գործընթացի անընդհատությունն ու հաջորդայնությունը, մրցութայնությունը, թափանցիկությունը, հրապարակայնությունը և այլն: Սույն օրենքով սահմանվում են նաև բարձրագույն ուսումնական հաստատությունում պրոֆեսորադասախոսական և գիտական աշխատողների ու ուսանողների ակադեմիական ազատությունները: Մասնավորապես նշվում է, որ ուսանողները կարող են իրենց հայեցողությամբ, ըստ հակումների և պահանջմունքների՝ ընտրել մասնագիտություն, ԲՈՒՀ-ի տեսակը և ուսուցման ձևը, ընդհատել կամ շարունակել կրթությունը: Սովորողների ակադեմիական ազատությունների մասին համապատասխան դրույթներ են

ամրագրվել նաև <<Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին>> ՀՀ օրենքում:

Այսպիսով՝ մասնագիտության ընտրությունը ազատ է, սովորողներն իրենց ընտրությունը կատարում են ելնելով իրենց նախասիրություններից և ընդունակություններից: Մասնագիտության ընտրության հարցում գենդերային պատկերը հետևյալն է:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության ոլորտում կանանց առավել մեծ ընդգրկվածություն նկատվում է արվեստի և դիզայնի, սպասարկման, իսկ վերջին տարիներին նաև՝ էկոնոմիկայի և ղեկավարման, ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի մասնագիտություններում: Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում այս ցանկին ավելանում է նաև տնտեսագիտությունը:

Բարձրագույն կրթության ոլորտում պատկերը հետևյալն է: Սովորողների համակազմում կանանց առավել մեծ ներգրավվածություն սովորաբար նկատվել է առողջապահության, մանկավարժության և արվեստի ոլորտներում: Թերևս մանկավարժության, արվեստի և առողջապահության ոլորտներում կանանց թվի գերակշռությունը ավանդական է, սակայն ներկայումս կանանց կողմից նախապատվելի են դարձել նաև տնտեսագիտության և կառավարման, ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի, բնագիտական գիտությունների բնագավառները: Դա պայմանավորված է և՛ աշխատաշուկայում նշված մասնագիտությունների մեծ պահանջարկով, և՛ հասարակության մեջ նոր հարաբերությունների ձևավորմամբ, ինչպես նաև հասարակական կյանքի տարբեր ոլորտներում կանանց ու տղամարդկանց հավասարաչափ մասնակցության անհրաժեշտությամբ:

Իսկ գիտատեխնիկական գործունեության ոլորտում կանայք շարունակում են առավել մեծ հետաքրքրություն դրսևորել բնական, հումանիտար և հասարակական գիտությունների նկատմամբ, իսկ վերջին տարիներին այս ցանկին ավելացել են նաև տեխնիկական գիտությունները: Ասպիրանտուրայում սովորող կանայք սկսել են նախընտրել քաղաքական և ֆիզիկամաթեմատիկական գիտությունները, իսկ դոկտորանտուրայում՝ բժշկական մասնագիտությունը:

Միաժամանակ վիճակագրական տվյալների վերլուծությունը դասավանդողների համակազմի վերաբերյալ՝ ըստ կրթության տարբեր մակարդակների, մեզ թույլ է տալիս անել հետևյալ դիտարկումները:

Հանրակրթական դպրոցներում մանկավարժների մեջ կանայք կազմել են 84.3%:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատություններում մանկավարժական անձնակազմի թվաքանակի մեջ կանայք կազմել են մոտ 64.5%, իսկ միջին մասնագիտականում՝ 75.4%:

Բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններում պրոֆեսորադասախոսական անձնակազմի թվաքանակի մեջ կանայք կազմել են 50.5%: Նախորդ տարիների համեմատ այդ ցուցանիշը աճել է հօգուտ կանանց:

Վերը նշված թվային տվյալները վկայում են կրթության ոլորտում մանկավարժական համակազմի սեռային անհամամասնության մասին: Հատկապես հանրակրթության ոլորտում առկա է ֆեմինացում: Կանանց գերակշռությունը կրթության ոլորտում կարելի է ասել, որ ավանդական է: Սակայն իրավիճակը կտրուկ փոխվեց հատկապես 1993թ. ճգնաժամային տարիներին: Աշխատավարձի ու մասնագիտական վարկանիշի ցածր մակարդակի և սոցիալական թույլ պաշտպանվածության պատճառով համակարգից դուրս եկան մեծ թվով տղամարդ մանկավարժներ: Իսկ բուհական համակարգում ընդգրկված դասախոսական համակազմում գենդերային առումով նկատելի է որոշակի հավասարակշռություն:

Ոչ խտրական մոտեցումները կրթության և մասնագիտական ուսուցման հարցերում (կրթության ժողովրդավարացումը, կրթական ծրագրերում իրավունքի ուսուցման և սեռական դաստիարակության տարրերի ներմուծումը, այլ ազգերի ներկայացուցիչներին՝ իրենց մայրենի լեզվով կրթություն տալու հնարավորությունը)

Հայաստանի կրթության ոլորտի զարգացման քաղաքականությունը ներկա փուլում սերտորեն կապված է միջազգային կրթական հանրության զարգացման միտումների հետ: Ոլորտում ընթացող բարեփոխումները միտված են կրթության ազատականացմանը և հումանիտարիզացմանը, հասարակության մոտ հանդուրժողականության, ազատության, արդարության, ուրիշների նկատմամբ հարգանքի արժեքների կայացմանը: Այդ նպատակով կրթության բոլոր մակարդակներում վերանայվել են կրթական չափորոշիչներն ու ծրագրերը, ներդրվել են նոր առարկաներ ու մասնագիտություններ:

Հանրակրթության ոլորտի բարեփոխումների շրջանակներում 12-ամյա կրթակարգին անցնելու կապակցությամբ հաստատվել է նոր կրթակարգը, որի <<Հասարակական գիտություններ>> ուսումնական բնագավառում ընդգրկվել է մարդու՝ որպես անձի և քաղաքացու, նկարագիրը և սոցիալականացման փորձը: Այստեղ սովորողներին ներկայացվող պահանջների մեջ ամրագրվել են իրավունքներ, պարտականություններ, տուն, ընտանիք, հավասարություն, վստահություն հասկացությունները, որոնք ուղղակիորեն միտված են սովորողին ամբողջական գիտելիքներ տալ մարդու և հասարակության մասին, դաստիարակել ազգային ու համամարդկային արժեքներ կրող սոցիալապես ակտիվ անձ և քաղաքացի:

Հանրակրթության ոլորտում մուտք են գործել <<Կյանքի հմտություններ>>, <<Էկոլոգիական կրթություն>>, <<Հասարակագիտություն>>> և <<Ես և շրջակա աշխարհը>> առարկաները: <<Հասարակագիտություն>> առարկայի ծրագրում ընդգրկվել են մարդու հիմնարար իրավունքներին, գենդերային հավասարությանը, ազգային փոքրամասնությունների իրավունքներին, հանդուրժողականությանը և

քաղաքացիական հասարակությանը վերաբերող թեմատիկ միավորներ: Մշակվել է <<Հանդուրժողականություն>> ուսուցչի ձեռնարկը, որով սովորողներին ուսուցանվում է հանդուժողականության, համագործակցության, կոնֆլիկտների լուծմանն ուղղված թեմաներ և այլն:

Հանրապետության մի շարք բուհերում կազմակերպվել են հատուկ դասընթացներ՝ գենդերային քաղաքականության, կանանց և տղամարդկանց իրավահավասարության վերաբերյալ:

Հանրակրթական դպրոցի 8-11-րդ դասարաններում ներդրվել և դասավանդվում է <<Առողջ ապրելակերպ>> դասընթացը, մշակվել է նաև այս դասընթացի ուսուցիչների վերապատրաստման նյութերի փաթեթ (մոդուլ, բաշխման նյութեր), համապատասխան վերապատրաստում են անցնում առարկան դասավանդող ուսուցիչները: Դասընթացը նպաստել է սովորողների մոտ առողջ ապրելակերպի և ընտանեկան կյանքի նախապատրաստման հիմունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը:

Մասնագիտական կրթության ոլորտում իրականացվել է կրթության համալսարանացում, նոր մասնագիտությունների ներդրում, կառավարման և ֆինանսավորման հարցերում հաստատությունների ինքնավարության ընդլայնում:

Ուսումնական հաստատություններն անցել են խորհուրդներով կառավարման համակարգին, մեծացել են ուսումնական հաստատությունների ինքնավարությունն ու պատասխանատվությունը, հաստատությունների գործունեությունը դարձել է ավելի թափանցիկ:

Հանրակրթական դպրոցներում աշակերտական ինքնավարության զարգացման նպատակով ձևավորվել են աշակերտական խորհուրդներ: Այս նախաձեռնությունը հնարավորություն է տալիս երիտասարդներին ակտիվ մասնակցություն ցուցաբերելու իրենց դպրոցի և համայնքի կյանքի բարելավմանը, ձեռք բերելու թիմային աշխատանքի, առաջնորդության, հաղորդակցման, կարիքների բացահայտման, միջոցառումների պլանավորման ու իրականացման հմտություններ: Աշակերտական խորհրդի անդամները խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել դպրոցի կառավարմանը:

Նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ձևավորված կոլեգիալ կառավարման մարմիններում՝ խորհուրդներում ընդգրկված են հիմնադրի, լիազոր պետական մարմնի, ուսանողության, մանկավարժական կազմի, սոցգործընկերների, ինչպես նաև զբաղվածության ծառայության ներկայացուցիչներ: Հաստատություններում գործում են նաև մանկավարժական և ուսանողական խորհուրդներ:

Բարձրագույն ուսումնական հաստատություններում ևս մեծացել է սովորողների մասնակցությունը կառավարման խնդիրներում: Բուհերի խորհուրդների կազմերում ուսանողական ներկայացուցիչները ունեն 25% մասնակցություն: Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողները կարող են միավորվել ուսանողական խորհուրդներում, ուսանողական գիտական ընկերություններում և ուսանողական այլ կազմակերպություններում: Ուսանողները և

նրանց կազմակերպությունները, բացի այն, որ ներկայացված են բուհերի կառավարման խորհուրդներում, ունեն նաև բուհի գործունեության պլանավորման և վերահսկողական գործառույթներ, աշխատանքների մի մասը նպատակաուղղում են նաև բուհի սոցիալապես անապահով ուսանողների հայտնաբերման և համապատասխան աջակցության ցուցաբերմանը:

Պետական բուհերում և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում վերջին տարիներին սկսել են ձևավորվել կարիերայի կենտրոններ, որոնք խորհրդատվական և ուղղորդման աշխատանքներ են իրականացնում ուսանողների շրջանում՝ աշխատանքի տեղավորման նպատակով:

Միաժամանակ ուսումնական հաստատություններն ունեն իրենց ինտերնետային կայքերը, որոնք նպաստում են սովորողների տեղեկացվածության բարձրացմանը իրականացվող ծրագրերի և օրենսդրական խնդիրների շուրջ: Տեղեկատվության մեծ աղբյուր են հանդիսանում նաև ՀՀ կրթության և գիտության նախարարության պաշտոնական՝ www.edu.am և www.armedu.am կայքերը: Շահառուների մասնակցության ապահովման համար նշված կայքերում բացվել են ֆորումների և հանրային քննարկումների էջեր, որոնք ամրապնդում են հետադարձ կապը: Գործում է նաև բարձրագույն կրթության անգլիալեզու ինտերնետային կայքը՝ http://studyinarmenia.org:

Հոգևոր դաստիարակություն

<<Կրթության մասին>> ՀՀ օրենքում կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքների մեջ նշված է, որ ուսումնական հաստատություններում կրթությունն ունի աշխարհիկ բնույթ: Կրոնական գործունեությունը և քարոզչությունը ուսումնական հաստատություններում արգելվում են:

Կրթության հասանելիությունը այլազգիների համար

Հայաստանում պետական լեզուն հայերենն է և ուսումնական հաստատություններում կրթությունը իրականացվում է հայերեն լեզվով: Սակայն այլ ազգությունների համար սա խոչընդոտ չի հանդիսանում՝ սովորելու իրենց մայրենի լեզվով դպրոցում կամ դրանից դուրս: <<Լեզվի մասին>> ՀՀ օրենքի համաձայն՝ <<Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների համայնքներում հանրակրթական ուսուցումը եւ դաստիարակությունը կարող են կազմակերպվել իրենց մայրենի լեզվով՝ պետական ծրագրով եւ հովանավորությամբ, հայերենի պարտադիր ուսուցմամբ>>: Միաժամանակ ՀՀ կառավարության 2002 թվականի համապատասխան որոշմամբ առանձին դեպքերում (լեռնային, բարձր լեռնային, սահմանամերձ գյուղական բնակավայրերի դպրոցներում, փոքրամասնությունների լեզուներով դասարաններ ունեցող քաղաքային և գյուղական դպրոցներում և այլ դեպքերում), կարող է բացվել ավելի պակաս խտությամբ դասարան՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության (ՀՀ ԿԳՆ) թույլտվությամբ: Այս որոշումը հնարավորություն է ընձեռում եզդիական բնակչությամբ համայնքներում միայն եզդի երեխաներից բաղկացած դասարանների բացման համար:

Ազգային փոքրամասնությանը պատկանող քաղաքացու երեխաների ընդունելությունը դպրոց կատարվում է երեխայի ազգային (մայրենի) լեզվով ուսուցմամբ կամ այդ լեզվի դասընթաց ունեցող դպրոցում (դասարանում), իսկ դրա բացակայության դեպքում՝ ուսուցման լեզվի ընտրությունը կատարում են երեխաների (սովորողների) ծնողները:

Օտարերկրյա քաղաքացիների, Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող, երկքաղաքացի անձանց, ինչպես նաև այն դեպքում, երբ ծնողներից մեկը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, իսկ մյուսը՝ օտարերկրացի, երեխաների ուսուցման լեզվի ընտրությունը կատարում են երեխաների ծնողները (նրանց օրինական ներկայացուցիչը) անկախ ազգային պատկանելությունից:

Ազգությամբ ռուս և սլավոնական ծագում ունեցող ազգաբնակչության համար թվով 42 հանրակրթական դպրոցներում գործում են ռուսերենով ուսուցմամբ դասարաններ, որտեղ հանրակրթական առարկաների ուսուցումը իրականացվում է ռուսերեն լեզվով, բացառությամբ հայոց լեզու և գրականություն, ինչպես նաև հայոց պատմություն առարկաների: Միաժամանակ հանրապետությունում կան թվով 60 հանրակրթական դպրոցներ, որոնցում իրականացվում է ռուսերենի խորացված ուսուցում:

Հայաստանում ապրող եզդիներն ու ասորիները պետական կառույցների աջակցությամբ հանրակրթության համակարգում ստեղծել են ուսումնամեթոդական բազա: ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտում (ՀՀ ԿԳՆ ԿԱԻ) գործում են <<Իրանագիտության>> և <<Սեմագիտության>> առարկայական հանձնաժողովները, որոնք իրականացնում են եզդիերեն, քրդերեն ու ասորերեն լեզուներով ուսումնական ծրագրերի, դասագրքերի, ձեռնարկների փորձաքննություն:

Մշակվել է ազգային փոքրամասնությունների կրթությունը զարգացնելուն ուղղված ծրագիր և ժամանակացույց, համաձայն որի, ամեն տարի տպագրվում են դասագրքեր՝ ՀՀ ազգային փոքրամասնությունների լեզուն, գրականությունը և մշակույթը ուսումնասիրելու համար:

Հաստատվել է <<Ազգային փոքրամասնությունների հանրակրթական դպրոցի (դասարանի) օրինակելի ուսումնական պլանը>>, ըստ որի, ազգային փոքրամասնությունների մայրենի լեզվի և գրականության ուսուցման համար 1-12-րդ դասարաններում հատկացվել է շաբաթական 41 դասաժամ: Հաստատվել են քրդերենի և ասորերենի 1-12-րդ դասարանների չափորոշիչն ու ծրագիրը:

Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների համայնքների կողմից ներկայացված նախնական հայտերի հիման վրա ՀՀ պետական բյուջեում գումարներ են հատկացվում դասագրքերի հրատարակման համար: Հատկացված գումարների շնորհիվ հրատարակվել է ասորերեն լեզվով 1-ին և 2-րդ դասարանների դասագրքերը, քրդերենի <<Այբբենարանը>> և 2-4-րդ դասարանների դասագրքերը: Մշակվել և հրատարակվել են եզդիերենի 1-10-րդ դասարանների դասագրքերը: Այդ դասագրքերի մշակման աշխատանքներում ակտիվ մասնակցություն են ունեցել նաև

եզդիական համայնքը, ներգրավված են եղել ՀՀ ԿԳՆ ԿԱԻ-ի ազգությամբ եզդի մասնագետները:

Առավել ընդգրկուն է համագործակցությունը ռուսերեն լեզվի ուսուցման խնդիրների շուրջ: ՀՀ ԿԳՆ-ի կողմից <<Հայրենագիտություն-5>> և ավագ դասարանների մաթեմատիկայի դասագրքերը հայերենից թարգմանվել են ռուսերեն, տրամադրվել ազգային փոքրամասնությունների դպրոցների աշակերտներին:

ՀՀ ԿԳՆ ԿԱԻ-ի կողմից պարբերաբար իրականացվում են ազգությամբ եզդի ուսուցիչների վերապատրաստումներ, ինչպես նաև կազմակերպվել են հայոց լեզվի ուսուցման դասընթացներ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար:

Հանրապետությունում ամենամյա անցկացվող դպրոցականների օլիմպիադաների առարկայացանկում այլ լեզուների հետ միաժամանակ ներառված է նաև ռուսերենը: Դպրոցականների շրջանում անցկացվում են ռուսերենի մրցույթներ ու փառատոններ: Հայաստանի դպրոցականները մասնակցում են ռուսաց լեզվի հեռահար (դիստանցիոն) օլիմպիադային: ՀՀ ԿԳՆ ԿԱԻ-ի և ՀՀ-ում ռուսաց լեզվի զարգացման կենտրոնում մշտական գործում են ռուսաց լեզվի ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ, սեմինար-խորհրդակցություններ: Այս կենտրոնի հետ համագործակցության շրջանակներում քննարկվում են դասագրքերի, ուսումնական նյութերի և ուսուցիչների վերապատրաստման հետ կապված խնդիրներ:

Բուհական համակարգում ներդնելու նպատակով ՀՀ կրթության և գիտության նախարարությունը տպագրության է երաշխավորել <<Արամեագիտության և ասորագիտության ներածություն>> դասագիրքը:

Դասագրքերի մշակման և տպագրման գործընթացը շարունակական է և առաջիկայում նույնպես կտպագրվեն նոր դասագրքեր:

<<Հունաստանի և Հայաստանի միջև տնտեսական, արդյունաբերական, տեխնիկական և գիտական համագործակցության համատեղ միջկառավարական հանձնաժողովի նիստի փոխըմբռնման հուշագրի>> հիման վրա կազմավորվել է Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջը: Այստեղ ներդրվել է Հունաստանի զբոսաշրջության ոլորտում կուտակված փորձը, և համագործակցության շրջանակներում իրականացվում է <<Զբոսաշրջություն>> և <<Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում>> մասնագիտությունների ուսուցումը: Հաշվի առնելով այդ հանգամանքը, ուսումնական պլաններում ներառվել է նաև <<Հունարեն լեզու>> և <<Հունական մշակույթի պատմություն>> առարկաները: Բացի այդ, քոլեջում պատրաստվող բոլոր մասնագիտությունների ուսումնական պլանների նախասիրական առարկաների ցանկում ընդգրկվել է նաև հունարեն լեզուն, որն ուսուցանվում է ուսանողի ընտրությամբ:

Վերջին տարիներին հայերենի ուսուցման դասընթացներ են կազմակերպվում Հայաստանում բնակվող փախստականների համար: Մասնավորապես, 2012-2013թթ. ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ արևելահայերենի դասընթացներ են կազմակերպվել իրաքահայերի և սիրիահայերի համար: Ներկայումս այս նախաձեռնությանը մեծ աջակցություն է ցուցաբերում ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակը:

Կրթության մեջ բարեփոխումների իրականացման նպատակով անհրաժեշտ միջոցների տրամադրումը

Վերջին տարիներին կրթությանն ուղղվող պետական ծախսերի դինամիկայում արձանագրվել են դրական տեղաշարժեր: Ներկայումս կրթության տարբեր մակարդակների պետական միջոցների բաշխման կառուցվածքը համեմատելի է ՏՀԶԿ (Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD/ՏՀԶԿ)) երկրների ցուցանիշներին, 2007 թվականին կրթության ոլորտին ուղղված պետական հատկացումների շուրջ 87.1%-ն ուղղվել է հանրակրթության ոլորտին, իսկ 10.1%-ը՝ մասնագիտական կրթական ծրագրերի ֆինանսավորմանը: 2010 թվականին այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմել են՝ 82.3% և 14.2%, 2012 թվականին՝ 83.1% և 13.2%, 2013 թվականին՝ 81.8% և 14.3%: (ՏՀԶԿ երկրների միջին ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 72 % և 20 %:)

Վերջին տարիներին բարձրագույն կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներին աջակցելու նպատակով աստիճանաբար մեծանում է ՀՀ պետական բյուջեից մասնագիտական կրթական ծրագրերին ուղղված հատկացումների ծավալները:

<<Կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիր>> ՀՀ օրենքով սահմանված նպատակային ցուցանիշներին հասնելու համար կշարունակվեն կրթության որակի բարելավման ու մատչելիության բարձրացմանն ուղղված ծրագրերը, որոնց ՀՀ պետական բյուջեով կտրամադրվեն համապատասխան ֆինանսական միջոցներ՝ ըստ տարիների: Միաժամանակ Համաշխարհային Բանկի՝ <<Կրթության որակ և համապատասխանություն>> վարկային ծրագրի շրջանակներում կշարունակվի աջակցությունը հանրակրթության և մասնագիտական կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներին:

Կանայք և առողջապահությունը

Ժողովրդագրական-Առողջապահական և կանանց վերարտադրողական առողջության իրավիճակը Հայաստանում մինչև 2009թ.-ը

1997-2008թթ. ժամանակահատվածում Հայաստանում ժողովրդագրական-առողջապահական իրավիճակը և միտումները գոհացուցիչ չէին, ինչը դրսևորվում էր մահացության համեմատաբար բարձր ֆոնի վրա՝ 8,3-8,6/1000 բնակչի հաշվով, պտղաբերության, ծնելիության և բնական աճի կրճատումով, ինչը շարունակում էր մոտ 2 անգամ ցածր մնալ 1990թ. մակարդակից:

Այսպես եթե 1985, 1991թթ. եղել է 77.000, 78.000 ծննդաբերություն, 1995թ. 48960, 2000թ .՝34276, 2005թ. 37499, 2007, 2008, 2009թթ համապատասխանաբար 40105, 41185 և 44413: Բնական աճի ցուցանիշը 1000 բնակչի հաշվով 1990թ. կազմել է 16,3, 1995թ, 6.4, 2000թ. 2.7, ապա 2008թ. 4.2, 2009թ. 5.2, այսինքն նվազել է մոտ 3 անգամ:

Ի տարբերություն ԱՊՀ մյուս երկրների, բնական աճը, չնայած վերջին տասնամյակում կրճատմանը, շարունակում է մնալ դրական, տատանվելով 2,1-5.2 սահմաններում:

Հիմնախնդիրները

Վերարտադրողական առողջության ցուցանիշներով Հայաստանը զգալիորեն զիջում էր Եվրոպական միջին ցուցանիշներին:

1996-2009թթ. մայրական և պերինատալ մահացության ցուցանիշները գերազանցում էին եվրոմիության ցուցանիշները, համապատասխանաբար 4 և 3 անգամ:

Դեռևս 2000թ. իրականացված ժողովրդագրական-առողջապահական հետազոտության տվյալների համաձայն, չնայած հակաբեղմնավորիչ միջոցների վերաբերյալ կանանց շրջանում տեղեկացվածության բարձր մակարդակին՝ 98%, դեռևս ցածր է ժամանակակից բեղմնականխիչների օգտագործումը /20%/:

Աբորտը, դեռևս օգտագործվում էր որպես ընտանիքի պլանավորման մեթոդ, սակայն ցուցանիշը դինամիկայում ցուցաբերում էր իջեցման միտում, եթե ցուցանիշը 1995 թ. կազմում էր 30/1000, ապա 2009թ, 15/1000 պտղաբեր տարիքի կանանց հաշվով:

Արգանդի վզիկի և կրծքագեղձի քացկեղի տարածվածությունն տարեց տարի ցուցաբերում էր բարձրացման միտում և մտահոգողը ուշացած ախտորոշումն է, քաղցկեղի բարձիթող փուլերում:

Դեռահասների կրթության և վերարտադրողական առողջության ծառայությունների իրավունքը ամբողջությամբ չէր պահպանվում: Տղամարդկանց և տարեցների սեռական խնդիրներն մեծամասամբ անտեսված էին :

Ծննդօգնությունը հիմնականում ֆինանսավորվում է պետական բյուջեից, սակայն այն շարունակվում է մնալ անբավարար դեղորայքի, սարքավորումների, բուժպարագաների ձեռք բերելու և աշխատողներին բավարար աշխատավարձ վճարելու առումով: Բժշկական անձնակազմի աշխատավարձը չէր գերազանցում 100- 200 դոլար:

2009թ-ից ի վեր 2010-2013թթ.

Հայաստանում ժողովրդագրական-առողջապահական ցուցանիշները ցուցաբերում են դրական միտումներ, որը բնութագրվում է ծնելիության նվազեցման տեմպերի փոքրացմամբ:

Ինչպես և նախորդ տասնամյակում, ներկայումս ևս համաձայն պետության կողմից երաշխավորված նպատակային ամենամյա ծրագրերի, հղիության և ծննդաբերության ընթացքում, սոցիալապես անապահով կանանց համար, ինչպես նաև անհետաձգելի հիվանդությունների դեպքում իրականացվում է անվճար բուժօգնություն և սպասարկում, որի շրջանակները և ֆինանսավորումը Պեկինյան համաժողովից հետո ընկած ժամանակահատվածում ,տարեց տարի ընդլայնվում են:

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից գերակա խնդիրների շարքում առավել կարևորվել են մայրերին և երեխաներին ուղղված ծրագրային ուղղությունները: Արդյունքում ծննդօգնության և երեխաների հիվանդանոցային օգնության ծրագրերի ֆինանսավորման աճ է արձանագրվել շուրջ 3.5 անգամ (2006 թվականին - ծննդօգնության ծրագրով՝ 1.99մլրդ. դրամ և երեխաների ծրագրով՝ 1.77 մլրդ դրամ, 2013 թվականին համապատասխանաբար՝ 6.4 մլրդ դրամ և 6.7 մլրդ դրամ):

Բյուջետային հատկացումների այս աննախադեպ աճը հնարավորություն տվեց ինչպես շարունակաբար իրականացնել 2008 թվականի հուլիսի 1-ից ներդրված Ծննդօգնության պետական հավաստագրի ծրագիրը, այնպես էլ, որպես դրա տրամաբանական շարունակություն, 2011 թվականի հունվարի 1-ից համակարգում ներդնել Երեխային առողջության պետական հավաստագրի ծրագիրը:

Իրականացված միջոցառումների շնորհիվ զգալի բարելավվել են ծննդօգնության հիմնական ցուցանիշները՝ 35%-ով ավելացել է հղիների նախածննդյան հսկողություն վաղ հաշվառման ցուցանիշը, բարելավվել են հղիների նախածննդյան սկրինինգի ցուցանիշները, մասնավորապես, 3անգամ գերծայնակին հետազոտման են ենթարկվել հաշվառված հղիների 80%, ՄԻԱՎ-ի վերաբերյալ հղիների հետազոտության ցուցանիշը գրեթե 95% է:

Մոր և մանկան հիվանդանոցային ծառայությունների ֆինանսավորումը բյուջեից, մլրդ. դրամ



Բուժօգնության ու սպասարկման մատչելիության բարձրացման նպատակով մեծ աշխատանքներ են իրականացվում հատուկ մոտեցում պահանջող բնակչության խմբերի անվճար բուժօգնության կազմակերպման, նրանց անվճար դեղորայքով ապահովման, տեղերում՝ ըստ բնակության վայրի հետազոտումն ու բուժումն կազմակերպելու ուղղությամբ:

Ինչպես ցույց է տալիս վիճակագրական տվյալների վերլուծությունը , կանանց մոտ բոլոր տարիքային խմբերում նկատվում է հիմնական հիվանդությունների, մասնավորապես ակտիվ տուբերկուլոզով, չարորակ նորագոյացություններով, սեռավարակներով ընդհանուր հիվանդացության և մահացության մակարդակի էական իջեցում տղամարդկանց համեմատությամբ:

Կյանքի սպասվող տևողությունը կանանց համար կազմում է 78 տարին, տղամարդկանց համար՝ 72:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ

Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ վարակի վերաբերյալ տվյալները հավաքագրվում են ընթացիկ և պարբերաբար անցկացվող ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտությունների միջոցով: Ընթացիկ հետազոտությունները ներառում են ՄԻԱՎ վարակի և ՁԻԱՀ-ի դեպքերի հայտնաբերումը և գրանցումը, դեպքի համաճարակաբանական վերլուծությունը ըստ տարիքի սեռի, փոխանցման ուղու, վարակման հավանական վայրի և ժամանակի, բնակչության տարբեր խմբերի, վարչական միավորների և այլն, դեպքի հաշվառումը և հաշվետվությունների ներկայացումը՝ ըստ ընդունված կարգի: ՄԻԱՎ վարակի տարածվածության մակարդակը բացահայտելու, համաճարակի զարգացման միտումները պարզելու համար պարբերաբար իրականացվում են կենսաբանական և վարքագծային հետազոտություններ, որոնք հնարավորություն են տալիս գնահատելու բնակչության առավել վտանգի ենթարկվող խմբերի շրջանում ՄԻԱՎ-ի

տարածվածությունը, բացահայտելու ՄԻԱՎ-ի տարածմանը նպաստող վարքագծային գործոնները: Հղիների գրեթե 95%-ը հետազոտվում է ՄԻԱՎ-ի վերաբերյալ: ՄԻԱՎ վարակ ունեցող բոլոր հղիներին տրամադրվում է մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելում: Հայաստանի Հանրապետությունում 2007 թվականից ի վեր նման կանխարգելում ստացած մայրերից ծնված երեխաների շրջանում ՄԻԱՎ վարակի որևէ դեպք չի արձանագրվել: ՄԻԱՎ վարակ ախտորոշումից հետո հիվանդների նկատմամբ սահմանվում է դիսպանսերային հսկողություն, որի շրջանակներում պարբերաբար իրականացվում են լաբորատոր-գործիքային հետազոտություններ, ցուցումների դեպքում տրամադրվում է հակառետրովիրուսային բուժում: ՀՀ բոլոր քաղաքացիները, անկախ սեռից, ունեն հավասար իրավունքներ և հասանելիություն ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հետ կապված առողջապահական ծառայություններին, այդ թվում հակառետրովիրուսային բուժմանը և խնամքին:

Վերարտադրողական առողջապահության և սպասարկման համակարգի կառուցվածքը և ցանցը

Հանրապետությունում կանանց վերարտադրողական առողջության պահպանումը իրականացվում է Հայաստանի Հանրապետությունում առկա առողջապահական կազմակերպությունների լայն ցանցի միջոցով: Հայաստանը այն եզակի երկրներից է, որն անգամ ամենափոքր գյուղական բնակավայրերում, դրանք թվով մոտ 800 է, ունի բուժօգնություն իրականացնող բժշկական կազմակերպություններ:

Հայաստանում գործում են 614 բուժամանկաբարձական կետեր, 255 ամբուլատոր պոլիկլինիկական բժշկական կազմակերպություն, 80 պոլիկլինիկա, 101 կանանց կոնսուլտացիաներ և կաբինետներ, 52 բժշկական կենտրոններ, որոնց կազմում նաև մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնար բաժանմունքներ, 11 ինքնուրույն ծննդատներ, 4 Երևանում և 7 մարզերում:

Բուժօգնության հասանելիությունը (աշխարհագրական տեսանկյունից) եթե խնդիր է, հատկապես գյուղական բնակչության համար, ապա այն հավասարապես է վերաբերում և՝ կանանց և՝ տղամարդկանց:

Բուժօգնության որակի և մատչելիության գյուղ/քաղաք կտրվածքում տարբերությունները կրճատելու նպատակով մարզերի համաչափ զարգացման ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակաշրջանում մարզերում շահագործվել է 11 խոշոր բժշկական կենտրոն: Վերանորոգվել են շուրջ 4 տասնյակ գյուղական առողջության կենտրոններ և ընտանեկան բժշկի գրասենյակներ:

Արդիականացված բժշկական հաստատություններում իրականացվել է ոչ միայն շենքերի հիմնանորոգում, այլ դրանք հագեցվել են ժամանակակից բժշկական սարքավորումներով, պարագաներով և կահույքով, ինչպես նաև իրականացվել է բժշկական անձնակազմի վերապատրաստում:

Ակնհայտ է նաև առաջընթացը շտապ օգնության՝ 1-03 ծառայության որակի բարելավման, նոր մեքենաների ձեռք բերման, ծառայության արդիականացման, սարքավորումներով և բարձրորակ կադրերով հագեցման գործում:

<u>Կանանց վերարտադրողական առողջության ծառայությունների հասանելիության մատչելիության բարձրացման նպատակով, այդ թվում գյուղական և հեռավոր շրջանների կանանց համար ներդրվեց</u>

2008 թվականի հուլիսի մեկից անվճար ծննդօգնության պետական հավաստագրի համակարգը, որը նպաստել է կանանց համար անվճար ծննդօգնության իրական մատչելիության և հասնելության ապահովմանը բոլոր խավերի համար: Երևան քաղաքում և հանրապետության բոլոր մարզերում ստեղծվել են երիտասարդներին բարյացակամ վերարտադրողական ծառայություններ մատուցող թվով 32 կենտրոններ են:

Մայրական և վերարտադրողական առողջության իրավիճակի միտումները 2009թ-ից ի վեր

Մայրական մահացություն (ցուցանիշը՝ մայրական մահացության դեպքերը 100 000 կենդանի ծնունդի նկատմամբ հաշվարկով)

Մայրական մահացության ցուցանիշը (դեպքերի թիվը՝ 100.000 կենդանի ծննդի նկատմամբ) համարվում է մայրական առողջության վիճակն արտացոլող ինտեգրալ ցուցանիշ: Ըստ ԱՀԿ ցուցումների, եթե երկրի բնակչության թիվը չի գերազանցում 5 մլն, ապա մայրական մահացության ցուցանիշի դինամիկան ավելի հավաստի է և իրական՝ միջին եռամյա ցուցանիշների համեմատության մեջ: Ըստ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության տվյալների, 2000-2010 թվականների ընթացքում Հայաստանում մայրական մահացության միջին եռամյա ցուցանիշը (100.000 ծնունդից) կրճատվել է շուրջ 2 անգամ (1999-2000 թվականներին՝ 39,9, 2008-2010 թվականներին՝ 23,8, իսկ 2011-2013թթ.՝19,1):

Շնորհիվ բուժօգնության մատչելիության և որակի բարձրացման հաջողվել է մայրական մահացության ցուցանիշը նվազեցնել և ապահովել ակնկալվող արդյունքը, այն է կրճատել մայրական մահացության եռամյա ցուցանիշը. այսպես համաձայն ՀՀ ԱՎԾ տվյալների , եթե 2008-2010թթ.մայրական մահացությանբ ցուցանիշը կազմել է 24,9/100000 կենդանաածնության հաշվով, ապա 2011-2013թթ. 19,2/100000 կենդանաածնության հաշվով, այսինքն մայրական մահացության միջին եռամյա ցուցանիշը , կրճատվել է շուրջ 25%ով:

Ըստ ԱՎԾ նախնական տվյալների, 2013 թվականին հանրապետությունում գրանցվել է մայրական մահացության 8 դեպք՝ ցուցանիշը կազմելով 18,6՝ 100.000 կենդանի ծնունդից:

Այնուամենայնիվ, մայրական մահացության Հայաստանի միջին եռամյա ցուցանիշը զգալի գերազանցում է ԵՄ երկրների համանուն ցուցանիշի միջին մակարդակը, սակայն ավելի քան երկու անգամ ցածր է ԱՊՀ երկրների միջին ցուցանիշից:

Մայրական մահացության ցուցանիշը , 100 000 կենդանի ծնունդի հաշվարկով, ըստ ՀՀ ԱՆ տվյալների



** 2011-2013 նախնական*

Մանկական մահացություն (ցուցանիշը՝ 0-1տարեկան երեխաների մահվան դեպքերը 1000 կենդանի ծնունդի նկատմամբ հաշվարկով)

Հայաստանը բնորոշվում ***մանկական մահացության*** միջին մակարդակով (ըստ ԱՀԿ դասակարգման), որը 1990 թվականին հաջորդող ժամանակահատվածում դրսևորել է անկման ակնհայտ միտում: Առաջընթաց է արձանագրվել ինչպես մինչև 5 տարեկան երեխաների, այնպես էլ ՄՄ ցուցանիշների առումով: Հայաստանի ՄՄ ցուցանիշը զգալի բարենպաստ է ԱՊՀ շատ երկրների համեմատությամբ, սակայն շուրջ 2 անգամ գերազանցում է միջին եվրոպական մակարդակը:

Ըստ ԱՎԾ տվյալների, 1990-2012 թվականներին ***մանկական մահացության*** (այսուհետ՝ ՄՄ) ցուցանիշը կրճատվել է ավելի քան 40%: ՄՄ պատճառական կառուցվածքում առաջին տեղում են պերինատալ շրջանին բնորոշ հիվանդությունները, երկրորդ տեղում՝ բնածին արատները, իսկ երրորդ և չորրորդ տեղերում՝ շնչառական վարակներն ու փորլուծային հիվանդությունները: Նույն աղբյուրի տվյալներին համապատասխան, Հայաստանը բնորոշվում է մանկական մահացության (ՄՄ) ցուցանիշի միջին մակարդակով (ըստ Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության դասակարգման), որը 1990-2012թթ. ժամանակահատվածում կրճատվել է ավելի քան 1/3-ով (1990թ.-18.6‰, 2012թ.՝10.8‰)

Մանկական մահացության միտումներն ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների, ‰ -1000 կենդանի ծնունդից հաշվարկով



***- 2013 թ. նախնական**

Ասվածի ապացույցն է տարածաշրջանում ՄՄ միտումների վերաբերյալ ԱՀԿ եվրոպական գրասենյակի 2011թ. զեկույցը, համաձայն որի Հայաստանում 2010թ. նորածնային մահացությունը. նախորդ տարվա համեմատ նվազել է 0.5‰-ով (2009թ.- 12‰, 2010թ.-11.5‰), իսկ մանկական մահացությունը 0,9‰-ով (2009թ.- 18.4‰, 2010թ.-17.5‰): Ըստ նույն աղբյուրի, 1990-2010թթ. ընթացքում ՄՄ հաշվարկային ցուցանիշը Հայաստանում կրճատվել է 2.6 անգամ:

ԱՊՀ երկրների հետ համեմատության առումով, Հայաստանի ՄՄ ցուցանիշի մակարդակը բարենպաստ է, այն զբաղեցնում է 4-րդ հորիզոնականը, Ռուսաստանից, Ուկրաինայից և Բելառուսից հետո, սակայն Եվրոպական միջին ցուցանիշից այն բարձր է գրեթե 2 անգամ:

Այսպիսով, ինչպես պաշտոնական վիճակագրական տվյալները, այնպես էլ այլընտրանքային հետազոտության արդյունքները փաստում են, որ 2009-2013թթ. ժամանակահատվածում արձանագրվել են մոր և մանկան առողջության պահպանման ոլորտը բնութագրող հիմնական բժշկա-դեմոգրաֆիկ ցուցանիշների դրական միտումներ՝ շուրջ 1/3-ով նվազել են մայրական և մանկական մահացության ցուցանիշները:

<u>Հղիության արհեստական ընդհատումների իրավիճակը և միտումները</u>

Շնորհիվ հանրապետությունում հղիության արհեստական ընդհատման բժշկական գործընթացի բարելավման և հղիության դեղորայքային ընդհատման ծրագրի ներդրման, մայրական մահացության կառուցվածքում վերջին տարիներին կատարվել են լուրջ փոփոխություններ մայրական մահացության կառուցվածքում հղիության արհեստական ընդհատումով և դրա բարդություններով պայմանավորված մայրական մահվան դեպքերի կանխարգելման և իջեցման ուղղությամբ:

Ընտանիքի պլանավորման և Հակաբեղմնավորիչ միջոցների կիրառման միտումները

ՀԺԱՀ-2010-ը տեղեկատվություն է հավաքագրել հակաբեղմնավորման մեթոդների իմացության և օգտագործման վերաբերյալ:

Ըստ ՀԺԱՀ-2010թ-ի տվյալների հարցման պահին ամուսնացած կանանց կեսից ավելին՝ 55 տոկոսը, օգտագործել է հակաբեղմնավորման որևէ մեթոդ: Հակաբեղմնավորման մեթոդ օգտագործողների կեսը նախապատվությունը տալիս է հակաբեղմնավորման ավանդական մեթոդներին (28 տոկոս), իսկ մյուս կեսը՝ ժամանակակից (27 տոկոս): Առավել հաճախակի օգտագործվող մեթոդն է ընդհատված սեռական հարաբերությունը (25 տոկոս), որին հաջորդում է տղամարդու պահպանակը (15 տոկոս), ապա Ներարգանդային միջոցը (ՆԱՄ) (10 տոկոս):

Հակաբեղմնավորման մեթոդների օգտագործման ցուցանիշը տարիքին զուգահեռ աճում է և հասնում իր գագաթնակետին՝ 70 տոկոս, հարցման պահին ամուսնացած կանանց 30-34 տարիքային խմբում, ապա նվազում է մինչև 37 տոկոս՝ 45-49 տարիքային խմբի դեպքում:

Կանանց հիվանդացությունն ու մահացություն

Ծնվելու պահից սկսած երեխաների խնամքում սեռային խտրականությունը ընտանիքներում բացակայում է, ինչը փաստվում է երեխաների մահացության սեռա-տարիքային կառուցվածքի վերլուծությամբ: Մահացության ցուցանիշը առավել բարձր է տղաների, քան աղջիկների մոտ գրեթե բոլոր տարիքային խմբերում (մասամբ պայմանավորված կենսաբանական գործոնով): Վերջինս վկայում է աղջիկների խնամքի հետ կապված դիսկրիմինացիայի բացակայության մասին:

Կանանց հիվանդացությունը և մահացությունը բոլոր խումբ հիվանդություններից (միզասեռական, օնկոլոգիական, սիրտանոթային, ինֆեկցիոն և այլն) ավելի ցածր է, տղամարդկանց համեմատությամբ, համարյա բոլոր տարիքային խմբում:

Հազարամյակի Զարգացման 5–րդ նպատակին հասնելու հնարավորությունների գնահատում

Ինչ վերաբերում է Հազարամյակի Զարգացման 5 –րդ նպատակին «Մայրական առողջության բարելավմանը, ապա կարելի է փաստել, որ դրված նպատակներից շատերը կարելի է ներկա միտումների հիմնա վրա գնահատվել որպես հասանելի

• Թիրախ 6.Ա. Մինչև 2015թ. 1990թ. Համեմատ 3/4 կրճատել մայրական մահացության մակարդակը	** Հավանական հասանելի է մայրական մահացության ինդեքսը սահմանվել է Հայաստանի համար ոչ ավելի քան 11,2/100000

	2009-2011թ.այն կազմել է 15,7/100000 2010,2011թթ՝ առանձին տարիներին 6,8/1000000
• Թիրախ 6.B. Մինչև 2015թ. ապահովել վերարտադրողական առողջապահության համատարած մատչելիություն	Հասանելի է ✓ նախածննդյան գոնե մեկ այց կատարած հղիների ցուցանիշը 2005թ.համեմատությամբ աճել է 6%-ով և դարձել է 99% ✓ **ՆԲԽ- 4 և ավելի այց կազմել է 93%** ✓ իսկ ստացիոնար ծննդաբերությունների ցուցանիշը դարձել է 99.4%: ✓ **Հղիների 100%-ի** ծննդօգնությունը իրականացրել է որակավորված բուժաշխատողը:

Այսպիսով, **մայրամահացության ինդեքսը** 1989-91թթ. կազմել է 32.6/100000 կենդանածնի հաշվով: Հետագա տարիներին արձանագրվել է ցուցանիշի շատ մեծ տատանումներ. Սկսած 2009թ. նկատելի իջեցում 2009-2011թթ.ընթացքում կազմել է 15,7, իսկ առանձին վերցրած 2010 և 2011թթ 6.7/100 000 հաշվարկով, մնան միտումների շարունակման դեպքում նպատակը 2015թ. կրճատել մայրական մահացության ինդեքսը ավելի քան 11.6/100 000 հաշվարկով, կարող է լինել հասանելի:

Որակյալ բժշկական անձնակազմի միջամտությամբ ընթացած ծնունդների %

Հանրապետությունում ներկայումս ծնունդները համարյա համատարած (99%) ընթանում են որակյալ բժշկական անձնակազմի հսկողության ներքո:

Վերջին հետազոտությունների տվյալների համաձայն (2010 թ. ՀԺԱՀ), գրեթե բոլոր ծնունդները(100%) ընթացել են որակյալ բժշկական անձնակազմի հսկողության պայմաններում:

Նկատվում է ցուցանիշի բարելավում 1996-2000թթ. համապատասխան 91,5% ցուցանիշի համեմատությամբ:

2005թ. ՀԺԱՀ-ի համաձայն ծննդաբերությունների շուրջ 96.5% տեղի է ունեցել առողջապահական հաստատություններում, իսկ տնային պայմաններում ծննդաբերությունները կրճատվել են և 2010 թ. կազմել ընդամենը 0,4% (8.5%՝ 2000 թ, 2,2%՝2005թ.):

ՀՀ Ազգային վիճակագրության ծառայության տվյալների համաձայն, **դեռահասների շրջանում ծնունդները կրճատվել են՝** 1990 թ. 69.1-ից (15-19 տարեկան 1.000 կնոջ հաշվով)՝ 2008 թ. կազմելով 25.7, 2011թ .20,8:

Չնայած այն հանգամանքին, որ համապատասխան ցուցանիշում առկա են որոշակի տարբերություններ ըստ քաղաքային ու գյուղական բնակավայրերի (2011թ.-ին 15-19 տարիքային խմբում 1000 կանանց հաշվով ծննդաբերության ցուցանիշները քաղաքային ու գյուղական բնակավայրերում կազմել են համապատասխանաբար 11,6 և 23,4):

<u>Պայքար բռնության դեմ</u>

ՀՀ վարչապետի 2010 թվականի մարտի 30-ի N 213-Ա որոշմամբ ստեղծվել է Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողով: Հանձնաժողովի մանդատն է գենդերային բռնության կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացման արդյունավետության բարձրացումը, տեղեկատվության հավաքագրումը և փոխանակման մեխանիզմների մշակումը, ինչպես նաև, որպես առաջնային խնդիր՝ «Ընդդեմ գենդերային բռնության» ազգային ծրագրի մշակումը:

2011 թվականի հունիսի 17-ի Հայաստանի Հանրապետության կառավարությունն ընդունեց Ընդդեմ գենդերային բռնության Ազգային ծրագիրը, Ընդդեմ գենդերային բռնության 2011-2015թթ. ռազմավարական ծրագիրը: Այս ծրագրերն իրականացվում են երեք ուղղություններով՝ կանխում, կանխարգելում, աջակցություն:

Հայաստանի հանրապետության օրենսդրությամբ բռնությունը կարգավորվում է մի շարք իրավական ակտերով, մասնավորապես, Քրեական օրենսգրքով, Քաղաքացիական օրենսգրքով, Ընտանեկան օրենսգրքով: Համաձայն այս իրավական ակտերի բռնությունն ըստ տուժողի սեռի առանձնացված չէ: Քրեորեն պատժելի է ցանկացած բռնություն անկախ սեռից: Քրեորեն պատժելի են բռնությամբ զուգորդվող հանցագործությունները, որոնք կարող են գործադրվել նաև ընտանիքում: Հարկ է նշել, որ որոշ հոդվածներում ծանրացուցիչ են համարվում հղի կանանց և անչափահասների նկատմամբ կատարված բռնությունները:

Հասարակական կազմակերպությունների նախաձեռնությամբ ՀՀ-ում մշակվել էր «Ընտանեկան բռնության մասին» օրենքի նախագիծ, որը ներկայացվել էր Կառավարություն կարծիքի համար: Մինչև օրենքը Կառավարություն փոխանցելը, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը այն ներկայացվել էր շահագրգիռ կառույցներին փորձագիտական կարծիք ստանալու համար: Նախագծի վերաբերյալ բացասական եզրակացություններ էին տվել դատահիրավական ոլորտին առնչվող բոլոր գերատեսչությունները, այդ թվում արդարադատության

նախարարությունը, դատախազությունը, դատական կառույցները, ոստիկանությունը: Եզրակայցությունը ներկայացվել էր Կառավարություն, ինչի արդյունքում ՀՀ վարչապետը հանձնարարել էր ՀՀ արդարադատության նախարարությանն ու Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը իրավական և դատական բարեփոխումների ծրագրով մի շարք իրավական ակտերում փոփոխություններ կատարելիս «ապահովել ընտանեկան բռնության դրսևորումների, ինչպես նաև դրանց արձագանքելու և կանխարգելելու գործուն մեխանիզմների ներառումը», ինչպես նաև հանձնարարվել է ՀԿ-ների հետ քննարկել և արդեն իսկ գործող սոցիալական աջակցության և պաշտպանության ծրագրերում ներառել հնարավոր նոր միջոցառումներ:

Կանանց նկատմամբ կատարվող սեռական և ֆիզիկական բնույթի բռնությունների խնդիրը, այդ թվում նաև ընտանիքում կատարված մշտապես գտնվում է իրավապահ մարմինների ուշադրության ու հսկողության կենտրոնում: ՀՀ ոստիկանության կազմում գործում է անչափահասների գործերով ծառայությունը, որի աշխատակիցների ուշադրության կենտրոնում է գտնվում անչափահաս աղջիկների նկատմամբ բռնությունների կանխարգելման և բացահայտման աշխատանքների իրականացումը: Գործընթացում սերտ համագործակցություն է իրականացվում ինչպես ոստիկանության այլ ստորաբաժանումների ու ծառայությունների, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմիններում գործող Անչափահասների հարցերով բաժինների, խնդրո առարկայով զբաղվող շահագրգիռ այլ նախարարությունների ու գերատեսչությունների, ինչպես նաև միջազգային կառույցների և տեղական հասարակական կազմակերպությունների հետ: Ընտանեկան բռնության, ինչպես նաև կանանց նկատմամբ յուրաքանչյուր բռնության դեպք, համապատասխան կարգով, գրանցվում է ոստիկանության տարածքային բաժնում: Կատարվում է տվյալների հավաքագրում, իրականացվում է առանձացված հաշվառում ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնում:

<u>Կանայք և տնտեսությունը</u>

Հայաստանում կանանց դերը և մասնակցությունը տնտեսությանը կարևորվում և խրախուսվում է գործարարության զարգացման տարբեր գործիքների ու մեխանիզմների միջոցով:

Մասնավորապես, 2001 թվականից ի վեր Հայաստանում մշակվում և պետական բյուջեից ֆինանսավորմամբ իրականացվում են փոքր և միջին ձեռնարկատիրությանը (ՓՄՁ) պետական աջակցության տարեկան ծրագրեր: Վերջիններիս շրջանակներում հասցեական միջոցառումներ են իրականացվել կին գործարարների բիզնես նախաձեռնությունների խրախուսման, տեղեկատվական ու խորհրդատվական աջակցության, ուսուցման, մարքեթինգային առաջմղման, վարկային ռեսուրսների հասանելիության բարձրացման ուղղություններով: Մասնավորապես, հարկ է առանձնացնել 2009-2013 թվականների ընթացքում ՓՄՁ

զարգացման քաղաքականության հետևյալ ուղղություններով ձեռքբերված արդյունքները.

- սկսնակ գործարարներին ձեռներեցության և ֆինանսական աջակցության շրջանակներում, ինչն ի դեպ իրականացվում է ՄԱԿ զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) հետ համագործակցությամբ, մոտ 300 կին գործարար հանդիսացել է շահառու,
- տեղեկատվական ու խորհրդատվական աջակցություն է տրամադրվել մոտ 15000 կին գործարարի՝ շահառուների ընդհանուր թվի ավելի քան 30 տոկոսը,
- շուրջ 850 կանայք օգտվել են ուսուցողական աջակցության ծրագրերից՝ կազմելով աջակցություն ստացողների ընդհանուր թվի մոտ 37 տոկոսը,
- 45 կին գործարարների օժանդակություն է ցուցաբերվել թղարկվող արտադրանքի և մատուցվող ծառայությունների՝ շուկաներ առաջմղման ուղղությամբ,
- վարկային երաշխավորություններից օգտվել է մոտ 10 գործարար կին, որը կազմել է երաշխավորություն ստացող գործարարների ընդհանուր թվի մոտ 9 տոկոսը:

ՀՀ գենդերային քաղաքականության 2011-15թթ. ռազմավարությամբ նախանշված է արդյունաբերական ոլորտներում, հատկապես թեթև արդյունաբերությունում կանանց համար նոր աշխատատեղերի ստեղծումը: Այս համատեքստում վերջին տարիներին պետություն-մասնավոր հատված համագործակցության հարթակի ներքո հարկային արտոնություններ են տրամադրվել հանրապետության մի շարք կազմակերպությունների, որոնց ներդրումային ծրագրերի շրջանակներում ընդհանուր հաշվով կանանց համար ստեղծվել է ավելի քան 1600 աշխատատեղ:

Միջազգային դոնոր կառույցների հետ համագործակցության շրջանակներում նույնպես մի շարք ծրագրեր են իրականացվել կանանց և հատկապես խոցելի կանանց տնտեսական հնարավորությունների ամրապնդման և տնտեսական ռեսուրսների հասանելիության բարձրացման ուղղությամբ: Մասնավորապես, Ասիական զարգացման բանկի (ADB) աջակցությամբ մեկնարկել է Հայաստանում կանանց ձեռներեցության զարգացման ծրագիրը 2013-2017թթ. իրականացման ժամանակահատվածով: Ծրագրի շրջանակներում կիրառվում է միասնական մոտեցում՝ Հայաստանի ձեռներեց կանանց և միկրո, փոքր ու միջին ձեռնարկություններին տնտեսական զարգացման գործընթացում ավելի մեծ դերակատարություն ունենալու հնարավորություն տրամադրելու առումով: Աջակցություն է տրամադրվում հիմնականում գործարար կանանց մատչելի վարկավորման և կարողությունների զարգացման ուղղություններով: Ծրագրի

տեխնիկական աջակցության հատվածը մեկնարկել է 2013 թվականին, և ներկա դրությամբ առկա են ավելի քան 50 կին շահառուներ:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ 2013 թվականից մեկնարկել է «Լավագույն կին-գործարար» ՀՀ վարչապետի մրցանակաբաշխությունը, որը երկրի տնտեսական զարգացման բնագավառում կանանց ձեռնարկատիրական գործունեության և նախաձեռնողականության խրախուսման, տնտեսության տարբեր ճյուղերում կին գործարարների նվաճումներն ըստ արժանավույնս գնահատման, հանրահռչակման և սատարման նպատակ ունի: Մրցանակաբաշխությունն անց է կացվում թվով 6 անվանակարգերում՝ «Լավագույն կին գործատու», «Լավագույն կին նորարար», «Լավագույն կին բարեգործ», «Լավագույն ապրանքանիշ», «Լավագույն երիտասարդ կին գործարար», «Լավագույն սկսնակ կին գործարար»:

<u>Կանանց քաղաքական մասնակցությունը</u>

2011 թվականի մայիսի 26-ին ընդունված ՀՀ նոր Ընտրական օրենգրքում սահմանվել են գենդերային զգայուն քվոտաներ, որոնք ուղղված են օրենսդիր իշխանությունում կանանց ներկայացուցչության մեծացմանը: Մասնավորապես, 108-րդ հոդվածը սահմանում է «... Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով կուսակցության, կուսակցությունների դաշինքի և դաշինքում ընդգրկված կուսակցություններիից յուրաքանչյուրի ընտրական ցուցակի 2-րդ համարից սկսած ցանկացած ամբողջ թվով հնգյակներում (2-6, 2-11, 2-16 և այդպես շարունակ՝ մինչև ցուցակի ավարտը) յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 80 տոկոսը: Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով կուսակցության, կուսակցության դաշինքի ընտրական ցուցակում ընդգրկվում է 25 թեկնածու: Կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուների թիվը չի կարող գերազանցել Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով պատգամավորների մանդատների թվի համար սույն օրենսգրքով սահմանված թվի եռապատիկը: Կուսակցության ընտրական ցուցակում կարող են ընդգրկվել նաև այլ կուսակցության անդամ չհանդիսացող անձինք»:

2012 թվականի մայիսի 6-ին կայացած խորհրդարանական ընտրությունների արդյունքներով հինգերորդ գումարման ԱԺ-ի կազմում կանանց թիվն ավելացել է հասնելով 14-ի:

ՀՀ կառավարության կազմում ընդգրկված են երկու կին նախարար որոնք ղեկավարում են ՀՀ սփյուռքի և մշակույթի նախարարությունները: Կին փոխնախարարներ են աշխատում աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում (երկու փոխնախարար), ինչպես նաև էկոնոմիկայի, կրթության և գիտության, մշակույթի, քաղաքաշինության և ֆինանսների նախարարություններում:

Ներկայումս առողջապահական համակարգում աշխատում են 11432 բժիշկ, որից 851 մանկաբարձ-գինեկոլոգ, 188 նեոնատոլոգ: Չնայած գերակշռող մասը 7994 կանայք են, սակայն առողջապահության համակարգում ղեկավար պաշտոններ զբաղեցնող 810 բժիշկներից միայն 363-ն են կանայք:

Հարկ ենք համարում նշել նաև այն հանգամանքը, որ վերջին տարիներին ավելացել է կանանց թիվը իրավապահ մարմիններում: Այսպես, այսօր մենք կարող ենք փաստել, որ ՀՀ ոստիկանությունում կտրուկ աճել է ոստիկան կանանց թվաքանակը: ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության Անչափահասների իրավունքների պաշտպանության և ընտանեկան բռնության դեմ պայքարի վարչության աշխատակիցների շուրջ 45 տոկոսը կազմում են կանայք:

Կանանց առաջխաղացման ինստիտուցիոնալ մեխանիզմներ

1996 թվականին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կառուցվածքում ստեղծվեց համապատասխան ստորաբաժանում՝ ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչություն, որի կանոնադրական խնդիրների մեջ, ի թիվս այլ հարցերի, ներառվեցին կանանց հիմնախնդիրները: Հետագայում ստորաբաժանման գործառույթներն ավելի ընդլայնվեցին:

Հայաստանում գործող Կանանց հարցերով զբաղվող կարևոր օղակներից է ՀՀ վարչապետին կից կանանց խորհուրդը: Կանանց խորհուրդը համակարգում է գենդերային ռազմավարության իրականացումը պետական քաղաքականության բոլոր ոլորտներում և հանրային կառավարման բոլոր մակարդակներում: Խորհրդի նպատակն է՝ սերտորեն համագործակցելով քաղաքացիական հասարակության ինստիտուտների հետ, նպաստել կանանց կարգավիճակի բարձրացմանն ու հասարակական, քաղաքական և տնտեսական ոլորտներում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովմանը: Ներկայումս քննարկման փուլում է գտնվում Խորհուրդը ՀՀ-ում կանանց վիճակի բարելավման և գենդերային քաղաքականության իրականացման ազգային մեխանիզմի վերածելու առաջարկը:

Կանայք և լրատվամիջոցները

Գենդերային խնդիրների հաղթահարման գործընթացում մեծ դեր են կատարում հայաստանյան հեռուստառադիոընկերությունները:

Հեռարձակվող լրատվության միջոցների ազատության, անկախության և բազմազանության ապահովման նպատակներից ելնելով՝ օրենքով գործում է անկախ կարգավորող մարմին:

Հայաստանի Հանրապետությունում գործում են հանրային և մասնավոր հեռուստառադիոընկերություններ:

Հանրային հեռուստառադիոընկերությունը հատուկ կարգավիճակ ունեցող պետական հիմնարկ է: Մարդու սահմանադրական իրավունքն ապահովելու նպատակով պետության կողմից ստեղծված անկախ հանրային հեռուստառադիոընկերությունը իր գործունեությամբ ապահովում է տեղեկատվական, քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային, մանկապատանեկան, գիտական, հայոց լեզվի և պատմության, մարզական, ժամանցային և հանրության համար կարևոր ու նշանակալից այլ տեղեկատվական բնույթի հաղորդումների բազմազանություն:

2010թ.-ին անցկացրած թվային հեռարձակման ցանցի միջոցով հանրապետական, մայրաքաղաքային, տարածքային սփռման հեռուստածրագրերի եթերային հեռարձակում իրականացնելու մրցույթներում լիցենզավորված անձի ընտրության ժամանակ անկախ կարգավորող մարմինը հաշվի է առնում՝ մասնավոր հեռուստաընկերությունների եթերային քաղաքականության ծրագրերը, որոնց բաղադրիչներից մեկն էլ՝ բազմակարծությունը խթանելու կարողությունը՝ համաձայն մասնակիցների ներկայացրած բիզնես ծրագրի:

Գործող հեռուստառադիոընկերությունների եթերային քաղաքականության ծրագրերը՝ ուղղված գենդերային հավասարության ապահովմանը, ներառում են հաղորդումներ, որտեղ ակտիվ լուսաբանվում են (ռադիոյի դեպքում՝ հեռարձակվում են) միջոցառումներ ուղղված կանանց հանդեպ բռնության տարբեր ձևերի կիրառմամբ, կանանց նկատմամբ ընտանեկան, կին լրագրողների, կին գործարարների հանդեպ բռնության դեպքերի վերացմանը: Ձեռնարկվում են հաղորդումներ՝ ուղղված կանանց և աղջիկներին մարմնավաճառությամբ զբաղվելուն դրդող հանգամանքների բացահայտմանն ու վերացմանը: Լրատվական և հրապարակախոսական հաղորդումներում կինը հանդես է գալիս որպես հասարակության լիիրավ անդամ: Լուսաբանվում են բռնության ենթարկված կանանց հասարակության մեջ վերաինտեգրվելու, մասնագիտական հմտություններ ձեռք բերելու, ինչպես նաև կանանց կյանքի մակարդակը բարելավելու, նրանց մասնակցությունը երկրի քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքին, հասարակության մեջ նրանց դերի ընդլայնմանն ուղղված միջոցառումները:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով («Հեռուստառադիոհաղորդումների չարաշահման անթույլատրելիությունը») արգելվում է բռնության և դաժանության քարոզ կամ պաշտամունք պարունակող հաղորդումների, էրոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումների, սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերի և անչափահասների առողջության, մտավոր ու ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների հեռարձակումը: Սակայն չկան այն մեխանիզմները, որոնք կտան

արգելվող բովանդակության սահմանման, ժամանակային սահմանափակման որոշման չափանիշները: ՀՀ նախագահը, կարևորելով բարձրացված խնդիրները, դիմել է Հանրային խորհրդին՝ իր հովանու տակ առնել հարցը՝ Հեռուստատեսության և Ռադիոյի ազգային հանձնաժողովի, հեռուստաընկերությունների ղեկավարների, խնդրով մտահոգ հասարակական կազմակերպությունների և մտավորականների հետ համատեղ կազմակերպելով քննարկումներ և մշակելով ինչպես Հանրային, այնպես էլ մասնավոր հեռուստաընկերությունների եթերային քաղաքականությունը փոխելու ծրագրեր:

Համաձայն 2010թ. հունիսի 10-ի Ազգային ժողովի կողմից ընդունված «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին կետի Հանրային հեռուստառադիոընկերության ղեկավար մարմինը՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը, բաղկացած է հինգ անդամից, որոնցից առնվազն մեկը կին է:

Համաձայն հեռուստատեսության և ռադիոյի ոլորտում գործող «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի բ) մասով արգելվում է այն գովազդը, որում պարունակվում են ռասային, ազգությանը, մասնագիտությանը կամ սոցիալական ծագմանը, տարիքային խմբին կամ սեռին, լեզվին, կրոնական և այլ համոզմունքներին վերաբերող վիրավորական արտահայտություններ, համեմատություններ և պատկերներ:

Կանայք և շրջակա միջավայրը

Երկրում շարունակվում է քաղաքացիական հասարակայնության կայացման գործընթացը, որի ձևավորմանը մեծապես նպաստում է նաև «Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» ՄԱԿ-ի ԵՏՀ-ի Օրհուսի կոնվենցիան: Հայաստանը անդամակցում է Օրհուսի կոնվենցիային 2001 թվականից:

2002 թվականից ՀՀ բապահպանության նախարարության նախաձեռնությամբ և ԵԱՀԿ-ի Երևանյան գրասենյակի օժանդակությամբ Հայաստանում ստեղծվել են 15 բնապահպանական տեղեկատվական կենտրոններ /Օրհուս կենտրոններ/: Կենտրոնների առաքելությունն է պետական մարմինների ու հասարակական կազմակերպությունների միջև կապի և անհրաժեշտ մեխանիզմների ստեղծումը՝ էկոլոգիական տեղեկատվության տարածման, ինչպես նաև բնապահպանական խնդիրների շուրջ քննարկմներին հասարակայնության մասնակցությունն ապահովելու համար:

ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծվել է Օրհուսի կոնվենցիայից բխող ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ

միջոցառումների ծրագրի մշակման, դրանց իրականացման համար անհրաժեշտ գործողությունների համակարգման նպատակով միջգերատեսչական հանձնաժողով, որի կազմում ընդգրկված են ՀԿ-ների ներկայացուցիչներ:

Հասարակության մասնակցության հարցերը կարգավորվում են նաեւ ՀՀ Ազգային Ժողովի կողմից հատատված «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով:

Քաղաքացիների հարցադրումներին արագ արձագանք ապահովելու համար նախարարությունում 2007 թվականից գործում է «Թեժ գիծ» ծառայություն:
Առկա են դեպքեր, երբ կառավարությունը, հաշվի առնելով հասարակական կազմակերպությունների ներկայացրած լրացուցիչ փաստարկները, փոփոխություններ է կատարել իր ընդունած որոշումների մեջ կամ միջոցներ ձեռնարկել բարձրացրած բնապահպանական խնդիրները լուծելու համար (ավելի մանրամասն տես Ռիո + 20 ազգային զեկույցում):

Մաս Երրորդ վիճակագրություն

Հարցի հետ առնչվող ամբողջ վիճակագրությունը տեղադրված է - http://www.armstat.am/en/?nid=82&id=1487 կայքեջի վրա:

ՄԱՍ Չորրորդ

Ուշադրություն պահանջող գերակայություններ

Պեկինի հռչակագրի և գործողությունների ծրագրի, ինչպես նաև Գլխավոր ասամբլեայի 23-րդ հատուկ նստաշրջանի կայացումից ի վեր հանրապետությունում իրականացվել են մի շարք պետական ծրագրեր, որոնք ներառում են միջոցառումներ՝ ուղղված գենդերային հավասարությանը և հասարակությունում կանանց առաջմղման հարցերին, չնայած դրան կան խնդիրներ, որոնք դեռևս ուշադրության կարիք ունեն, այդ թվում այն հարցերը, որոնք վերաբերում են կանանց առավել խոցելի խմբերի կողմից իրենց իրավունքների իրականացման ապահովմանը (հաշմանդամներ, փախստականներ, փոքրամասնություններ և այլն) կանանց առավել ընդգրկվածությանը քաղաքական և հասարակական կյանքում, կանանց տնտեսական մասնակցության խթանմանը, աղքատության հաղթահարմանը, գենդերային հավասարության ինստիտուցիոնալ մեխանիզմների ամրապնդմանը, սոցիալական և առողջապահական ոլորտների մի շարք կարևոր հարցերին:

<u>Հավելված</u>